

«ՆՈՐԱՇԵՆ» ՆՏ ԱԿ

ՄԱՍԻՍԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ



Շրջակա միջավայրի վրա ազդեցության

նախնական գնահատման հայտ

(լրամշակված)

«ՆՈՐԱՇԵՆ» ՆՏ ԱԿ-ի, տնօրեն

Գ. Բաղդասարյան

ԵՐԵՎԱՆ

2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հապավումներ 5

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 6

1 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 7

2 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ 8

 2.1 Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակը.....8

 2.2 Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի հաշվետվության կազմը 8

 2.3 Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի մեթոդաբանությունը 8

3 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԱԻՐԱՎԱԿԱՆ ԿԱԶՄԸ 10

4 ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ..... 13

 4.1 Նախագծային և տեխնոլոգիական լուծումները..... 15

 4.2 Բարեկարգում և կանաչապատում 20

 4.3 Ձրամատակարարում և ջրահեռացում 23

 4.4 Ձեռուլցում..... 24

 4.5 Գազամատակարարում և էլեկտրասնուցում..... 24

 4.6 Շինարարական աշխատանքների կազմակերպում 25

 4.6.1 Ապամոնտաժման աշխատանքների կազմակերպում..... 26

 4.6.2 Կառուցապատման աշխատանքների կազմակերպում..... 27

5 ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ԲԱՆԱԴԱՅՊԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ..... 30

 5.1 Տեղանքի ռելիեֆը և երկրաբանությունը..... 30

 5.2 Սեյսմիկ բնութագրերը..... 31

 5.3 Կլիմայական պայմանների հակիրճ նկարագրությունը 31

 5.4 Բնապահպանական հատուկ տարածքներ և պատմամշակութային հուշարձաններ 32

 5.5 Օդային ավազան 32

 5.6 Հողային ռեսուրսները և հողօգտագործումը 34

 5.7 Ջրային ռեսուրսներ..... 34

Մասիսի բժշկական կենտրոնի կառուցում

5.8	Բուսական աշխարհ	34
6	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ԿՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ	36
6.1	Շինարարության փուլ	36
6.1.1	Օդային ավազանի աղտոտվածություն և մեղմացման միջոցառումները	36
6.1.2	Աղմուկի և թրթռումների ազդեցություն և մեղմացում	38
6.1.3	Ջրօգտագործում և ջրային համակարգերի վրա ազդեցություն	39
6.1.4	Թափոնների առաջացում և կառավարում	41
6.1.5	Հողային համակարգերի վրա ազդեցություն և մեղմացման միջոցառումներ	43
6.1.6	Ազդեցություն բուսական աշխարհի վրա և մեղմացման միջոցառումներ	44
6.1.7	Սոցիալական ազդեցությունները և մեղմացումը	46
6.1.8	Երթևեկության վրա ազդեցություն և մեղմացման միջոցառումները	46
6.1.9	Աշխատանքի անվտանգություն և առողջություն	47
6.1.10	Հնարավոր արտակարգ իրավիճակները և մեղմացման միջոցառումները	48
6.1	Շահագործման փուլ	49
7.	ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	51
7.1	Բնապահպանական ազդեցությունները մեղմացնող միջոցառումները	51
7.2	Մոնիտորինգ	54
8.	ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ	67
9.	ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	69
10.	ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	70
	Հավելված 1. Ճարտարապետահատակագծային առաջադրանք	70
	Հավելված 2. Առաջին հարկի հատակագիծը	72
	Հավելված 3. Երկրորդ հարկի հատակագիծը	73
	Հավելված 4. Երրորդ հարկի հատակագիծը	74
	Հավելված 5. Ջրամատակարարման /ջրահեռացման նախագծման տեխնիկական պայման	75
	Հավելված 6. Գազաֆիկացման և գազամատակարարման տեխնիկական պայման	76
	Հավելված 7. Էլեկտրասնուցման տեխնիկական պայման	77
	Հավելված 8. Շինարարական հրապարակի կազմակերպման և ապամոնտաժման աշխատանքների պլան	78
	Հավելված 9. Ապամոնտաժման աշխատանքների հաջորդականությունը և ժամանակացույցը	79
	Հավելված 10. Կառուցապատման աշխատանքների հաջորդականությունը և ժամանակացույցը	80

Մասիսի բժշկական կենտրոնի կառուցում

Հավելված 11. Անշարժ գույքի սեփականության վկայական (սերդիր)	81
Հավելված 12. Աղբի հեռացման տեղեկանք.....	82
Հավելված 13. Բնապահպանական մեղմացնող միջոցառումների մոնիտորինգի պլան	83
Հավելված 14. Մասնակիցների ցանկ	86

Հապավումներ

ԱՎԾ	Ազգային վիճակագրական ծառայության
ԱԶԲ	Ասիական Չարգացման Բանկ
ԲԿ	Բժշկական Կենտրոն
ԲՄԾ	Բնապահպանական միջոցառումների ծրագիր
ՀԲ	Համաշխարհային Բանկ
ՀՀՇՆ	Հայաստանի Հանրապետության Շինարարական Նորմեր
ՆԳՀ	Նախնական գնահատման հայտ
ՇՄԱԳ	Շրջակա միջավայրի ազդեցության գնահատում
ՀՄԿ	Հիդրոոդերևութաբանության և մոխտորինգի կենտրոն
ՍԹԿ	Սահմանային թույլատրելի կոնցենտրացիա
ՔԿ	Քաղաքաշինության կոմիտե

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ծրագիրը	Մասիսի բժշկական կենտրոնի կառուցում
Ծրագրի նպատակը	Գործող նորմերին և չափանիշներին համապատասխանող սեյսմոկայուն բժշկական կենտրոնի կառուցում, հիվանդանոցային պայմանների բարելավում և օպտիմալացում:
Ծրագրի պատվիրատու	ՀՀ քաղաքաշինության կոմիտե
Փորձաքննական գործընթացի ձեռնարկող	«ՆՈՐԱՇԵՆ» ՆՏ ԱԿ և «Էմ Ջի դիզայն» ՍՊԸ
Նախագծային ծառայություններ	«ՆՈՐԱՇԵՆ» ՆՏ ԱԿ և «Էմ Ջի դիզայն» ՍՊԸ
Ձեռնարկողի հասցե	ք. Երևան, Հալաբյան փ. 11/36
Ձեռնարկողի կոնտակտային տվյալներ	Էլ. փոստ՝ norashendtc@gmail.com Հեռ.՝ (+374 93) 504 009
Կառուցապատվող տարածքի գտնվելու վայրը	ՀՀ Արարատի մարզ, Մասիս համայնք, Հերացի 1 փողոց
Տարածքի մակերեսը	4.87 հա
Բժշկական կենտրոնի կառույցի և օժանդակ կառույցների կառուցապատման մակերեսը	2 461 ք.մ
Բժշկական կենտրոնի նախագծային հզորությունը	55 մահճակալ

1 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ Արարատի մարզի Մասիսի բժշկական կենտրոնի (այսուհետ՝ ԲԿ) կառուցման աշխատանքների համար հիմք է հանդիսացել ՀՀ կառավարության 27 հունիսի 2019 թվականի «Հայաստանի Հանրապետությունում 2019 թվականի պետական բյուջեում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 1515-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» թիվ 783-Ն որոշումը:
2. ԲԿ-ի կառուցման նախագծային աշխատանքների պատվիրատուն հանդիսանում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու): Նախագծային աշխատանքներն իրականացվում են «ՆՈՐԱՇԵՆ» ՆՏ ԱԿ-ի և «Էմ Ջի դիզայն» ՍՊԸ-ի կողմից՝ Պատվիրատուի կողմից ներկայացված և նախագծային աշխատանքների համար հիմք հանդիսացող փաստաթղթերի, ինչպես նաև ՀՀ-ում գործող շինարարական նորմերի համաձայն:
3. Համաձայն ՀՀ-ի Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենքի Հոդված 14, կետ 7-ի, քաղաքաշինական կառույցները՝ 1500 ք.մ-ից բարձր կառուցապատման մակերեսով դասվում են որպես «Գ» կատեգորիա և պահանջում են ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից գործունեության բնապահպանական պետական փորձաքննության իրականացում:
4. Նախագծվող Մասիսի ԲԿ-ի կառույցի (ներառյալ՝ օժանդակ կառույցները) կառուցապատման մակերեսը կազմում է 2 461 ք.մ, ուստի ԲԿ-ի նախագիծը և նախատեսվող գործունեությունը ենթակա է բնապահպանական պետական փորձաքննության, պահանջում է շրջակա միջավայրի վրա ազդեցությունների նախնական գնահատման հայտ (ՆԳՀ) փաստաթղթի պատրաստում և ներկայացում ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն փորձագիտական եզրակացության ձեռք բերման նպատակով:

2 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

2.1 Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակը

5. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակն է բացահայտել նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կանխատեսվող բնապահպանական ազդեցությունները (շրջակա միջավայրը աղտոտող վնասակար նյութերը, թափոնները և այլ գործոններ), վերլուծել ու գնահատել այն և ցույց տալ, որ նախատեսված են դրա կանխարգելմանը, չեզոքացմանը և/կամ նվազեցմանն ուղղված անհրաժեշտ միջոցառումներ: Գնահատման նպատակն է նաև նույնականացնել հնարավոր սոցիալական ազդեցությունները և օգուտները, նախատեսել գործունեության դրական ազդեցությունների պահպանման և ուժեղացման միջոցառումները:

2.2 Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի հաշվետվության կազմը

6. ՇՄԱԳ հաշվետվության մեջ գնահատման ենթակա օբյեկտները և բնութագրերը սահմանված են "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 1-ից 13 կետերում:

2.3 Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի մեթոդաբանությունը

7. Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ՆԳՀ-ի մշակումն իրականացվել է ազգային օրենսդրության, մեթոդական և կարգավորող ընթացակարգերի

Մասիսի բժշկական կենտրոնի կառուցում

պահանջներին, ինչպես նաև ԱԶԲ-ի և ՀԲ բնապահպանական ուղեցույցների և ձեռնարկների դրույթներին համապատասխան: Նախնական գնահատման հայտում օգտագործվել են հետևյալ տեղեկատվական աղբյուրները.

- նախագծվող բժշկական կենտրոնի աշխատանքային նախագիծը
- նախատեսվող գործունեության տեղանք կատարած այցելությունների ընթացքում հավաքագրված տվյալները և տեղեկատվությունը
- տարածաշրջանի վերաբերյալ հաշվետվությունները, վերլուծությունները, քարտեզները
- ՀՀ օրենսդրության բնապահպանական և օրնսդրական կարգավորիչ շրջանակը
- շահագրգիռ կողմերի հետ քննարկումները

3 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԱԻՐԱՎԱԿԱՆ ԿԱԶՄԸ

8. Հայաստանի Հանրապետության բնապահպանական օրենսդրական և կարգավորիչ շրջանակն ընդգրկում է ավելի քան 30 բնապահպանական օրենքներ: Քաղաքաշինության ոլորտի համար առավել կիրառելի ազգային բնապահպանական քաղաքականությունները և օրենսդրական կարգավորիչ հիմքերն ներկայացված են ստորև.
9. **ՀՀ Սահմանադրություն (2015).** 10-րդ հոդվածը սահմանում է պետության պատասխանատվությունը շրջակա միջավայրի պահպանության վերարտադրության, բնական պաշարների բանական օգտագործման վերաբերյալ, ինչպես նաև հոդված 8ի համաձայն Սեփականության իրավունքի իրականացումը չպետք է վնաս պատճառի շրջակա միջավայրին:
10. **ՀՀ Օրենքը Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին (2014)** (Հոդված 14, կետ 6, հոդված 16) պահանջում է իրականացնել ծրագրերի բնապահպանական գնահատում, զննությունն ու ըստ կատեգորիաների դասակարգում կախված գործունեության ձևից, ինչպես նաև ենթարկել պետական փորձաքննության և ստանալ փորձագիտական եզրակացություն:
11. **ՀՀ Օրենքը Թափոնների մասին (2004)** կարգավորում է թափոնների, այդ թվում շինարարական աղբի, հավաքագրումը, տեղափոխումը, պահեստավորումը, վերամշակումը և տեղադրումը ՀՀ-ում:
12. **ՀՀ Օրենքը Բնապահպանական Վերահսկողության մասին (2005)** կարգավորում է ՀՀ-ում պետական վերահսկողության կազմակերպումը տնտեսվարող սուբյեկտների կողմից բնապահպանական օրենսդրության և ՇՄԱԳ փորձագիտական եզրակացության պահանջների կատարման վերաբերյալ:

13. **ՀՀ Օրենքը Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին (2000)** կարգավորում է տնտեսական գործունեության վերահսկողության ստուգայցերի իրականացման արարողակարգերը:
14. **ՀՀ Օրենքը Քաղաքաշինության մասին (1998)**(Հոդվածներ 13, 14,15,16, Գլուխ 6) կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը: Քաղաքաշինության ոլորտում բնապահպանական նորմերի և նորմատիվային փաստաթղթերի կիրառումն ապահովվում է Քաղաքաշինարարության նախարարի ՀՀ ՇՆ 10-01-2014 Շինարարությունում, նորմատիվ փաստաթղթերի համակարգ. Հիմնական դրույթներ Շինարարական նորմերը հաստատելու մասին N65-Ն հրամանով (8 ապրիլի 2014):
15. **ՀՀ Քաղաքաշինության նախարարի հրաման N11- Ն** «Շինարարական արտադրության կազմակերպման աշխատանքների կատարում Շինարարական նորմերը հաստատելու մասին» (14 հունվար 2008) (Գլուխ IX):
16. **ՀՀ Քաղաքաշինության նախարարի հրաման N 44** Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ (28 ապրիլի 1998) պահանջում է շինարարությանը վերաբերվող բոլոր նորմերի և ստանդարտների կիրառումը տնտեսվարող սուբյեկտի կողմից:
17. **ՀՀ Կառավարության որոշում N 121-Ն** «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» (2003), որը սահմանում է ՀՀ-ում այդ թվում քաղաքաշինության բնագավառում առաջացող բոլոր վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման պայմանները և կարգավորում է դրանց հետ կապված հարաբերությունները:
18. **ՀՀ Կառավարության արձանագրային որոշում N 30** «Շինարարության և քանդման թափոնների անվտանգ գործածության պայմաններին հավանություն տալու մասին» (23

հուլիսի 2009), որը սահմանում է շինարարության և քանդման թափոնների անվտանգ գործածության պայմանները, երկրորդային ռեսուրս հանդիսացող թափոնների օգտագործման անվանացանկերը, շինարարության և քանդման թափոնների տեսակների ցանկերը:

Ուղեցույցներ և ստանդարտներ

19. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցուցակ (2013), որը պարունակում է ՀՀ-ում գործող շինարարական նորմերի համակարգը, այդ թվում՝ տարբեր տիպի աշխատանքների անվտանգության վերաբերյալ:
20. **Բնապահպանական որակի ստանդարտներ**, որոնք կիրառվում են ջրային ռեսուրսների, օդի, ինչպես նաև աղմուկի և թրթռումների ազդեցությունը որոշելու համար, մշակված են և կիրառելի են նաև քաղաքաշինարարական ոլորտի համար:

4 ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ


21. Մասիսի ԲԿ-ը նախատեսվում է կառուցել ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքի Հերացի 1 փողոց հասցեում գործող «Մասիսի բժշկական կենտրոնի» տարածքում: Նկ. 1.-ում ներկայացված է նախատեսվող գործունեության տեղադիրքը և իրավիճակային հատակագիծը համայնքում:

22. ԲԿ-ն կունենա 55 մահճակալային հզորության, որտեղ կգործեն ստորև ներկայացվող բաժանմունքները.

- ընդունարան
- ախտորոշիչ և լաբորատոր բաժանմունք
- պոլիկլինիկական ծառայություններ
- 55 ստացիոնար մահճակալ ունեցող հիվանդանոցային ծառայություններ, այդ թվում՝ վիրաբուժական (5 մահճակալ), մանկաբարձագինեկոլոգիական (12 մահճակալ), մեծահասակների թերապևտիկ ու մանկաբուժական (30 մահճակալ), ինֆեկցիոն մեկուսարան (8 մահճակալ)
- շտապ բուժօգնության կայան՝ 1 հերթապահ բրիգադի հաշվարկով
- ինտենսիվ թերապիայի բաժանմունք (5 մահճակալ)
- անհետաձգելի բուժօգնության ծառայություն (3 մահճակալ)
- արյան պահպանման սենյակ
- օժանդակ ծառայությունների սենյակ¹, այդ թվում՝ կենտրոնական ախտահանում, լվացքատուն, ներհիվանդանոցային դեղատուն և ինժեներատեխնիկական սենյակ:

¹ Սենյակ՝ շենքի ներսում փակ տարածություն, որոշակի գործառնության նշանակության և բոլոր կողմերից սահմանափակված շինարարական կոնստրուկցիաներով (ՀՀ քաղաքաշինության նախարարի հրաման N-65Ն, 3 մարտ 2014):

Նկ.1 Մասիսի ԲԿ-ի տեղադիրքը և իրավիճակային հատակագիծը, ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնք:



23. Ներկայացվող գործունեության ընթացքում գործող «Մասիսի ԲԿ-ի» գոյություն ունեցող շենքը, որը կառուցվել է 1970-ական թվականներին և գտնվում է տեխնիկապես անմխիթար վիճակում, նախատեսվում է ապամոնտաժել: Ապամոնտաժման աշխատանքների որոշման հիմք են հանդիսացել գոյություն ունեցող շենքի տեխնիկական վիճակի ուսումնասիրությունները և շենքի ուժեղացման և նոր շենքի կառուցման տեխնիկատնտեսական հաշվարկների համադրությունը, ինչի արդյունքում որոշվել է կառուցել նոր նորմատիվային հիվանդանոց: Ներկայացվող գործունեության ընթացքում ապամոնտաժվելու է գործող հիվանդանոցի գլխավոր մասնաշենքը (մանկական թերապևտիկ և պոլիկլինիկական, ինֆեկցիոն մասնաշենքերը չեն ապամոնտաժվում և ներառված չեն նախագծման աշխատանքներում), որի տեղում կառուցվելու նոր ԲԿ-ի շենք՝ որպես մեկ ամբողջական շինություն, որտեղ տեղակայված են լինելու բոլոր հիվանդանոցային ծառայությունները (ըստ տեխնիկական առաջադրանքի):
24. ԲԿ-ին պատկանող ընդհանուր հողատարածքը կազմում է 4.87 հա և նախագծով կիրականացի շուրջ 2.2 հա (21 943 քմ) տարածքի կառուցապատման աշխատանքներ, մասնավորապես՝ հիվանդանոցի շենքի կառուցապատման մակերեսը կկազմի 2 246 ք. մ, օժանդակ կառույցների կառուցապատման մակերեսը՝ 215 ք. մ, կիրականացվի 19 482 ք. մ մակերեսով տարածքի բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ շուրջ, ինչպես նաև նախատեսվում է իրականացնել ԲԿ-ի տարածքի կառուցապատվող հատվածի ողջ պարագծով ցանկապատի իրականացում:
25. Նախատեսվում է նաև կենտրոնը հագեցնել նոր սարքավորումներով, բժշկական կահույքով և պարագաներով:

4.1 Նախագծային և տեխնոլոգիական լուծումները

26. ԲԿ-ի նախագծման աշխատանքներն իրականացվել են ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից մշակված տեխնիկական առաջադրանքի և ճարտարապետահատակագծային

Մասիսի բժշկական կենտրոնի կառուցում

առաջադրանքի փաստաթղթերի (*Հավելված 1.*), ինչպես նաև ՀՀ-ում գործող շինարարական նորմերի համաձայն:

27. Նախագծված ԲԿ-ն բաղկացած է երկու եռահարկ և մեկ երկհարկանի մասնաշենքերից և օժանդակ կառույցներից, մասնավորապես՝ կենտրոնական ախտահանման, լվացքատան, ներհիվանդանոցային դեղատան և ինժեներատեխնիկական սենքերից, կաթսայատնից և շտապօգնության կայանից, ինչպես նաև հատակագծում հաշվի են առնված ավտոկայանատեղիներ, անցուղիներ, ճեմուղիներ և կանաչապատ գոտիներ: Բկ-ի համալիրի գլխավոր հատակագիծը ներկայացված է **Նկ.1**-ում:
28. ԲԿ-ի շենքը նախագծված է 52.4 x 76 մ արտաքին չափերով և 3.6 մ հարկերի միջին բարձրությամբ: Առաջինից երրորդ հարկերի հատակագծերը բերված են *Հավելվածներ 1-ից 3*-ում: Ըստ հարկերի՝ բաժանմունքների նախագծված են.

Առաջին հարկ՝	- շտապօգնություն
	- ախտորոշիչ և լաբորատոր բաժանմունք
	- պոլիկլինիկական ծառայություններ
	- ինֆեկցիոն բաժանմունք
Երկրորդ հարկ՝	- վիրահատական և վիրաբուժական բաժանմունք
	- ինտենսիվ թերապիա
	- մանկական և մեծահասակների թերապևտիկ բաժանմունքներ
Երրորդ հարկ՝	- մանկաբարձագինեկոլոգիական բաժանմունք
	- ադմինիստրացիա

29. Համալիրի մուտքը նախատեսված է Հերացի փողոցի կողմից և հաշվի են առնված մոտեցման ճանապարհները դեպի շտապօգնության ընդունարան, հետիոտնային մոտեցումները դեպի ԲԿ-ի գլխավոր մուտք և նախագծվող բաժանմունքներ:

30. Կոնստրուկտիվ լուծումների տեսանկյունից, բոլոր մասնաշենքերը նախագծվում են միաձույլ ե/բ կրող կոնստրուկցիաներով, ներառյալ՝ շենքի հիմքերը, սյուները, հեծանները

Մասիսի բժշկական կենտրոնի կառուցում

և միջհարկային սալերը: Արտաքին պատերում նույնպես օգտագործվելու են ե/բ կոնստրուկտիվ լուծումներ: ԲԿ-ի տանիքը նախատեսվում է հարթ և ջերմամեկուսացման լուծումներով:

31. ԲԿ-ի նախագծային լուծումներում հաշվի են առնված նաև սակավաշարժ խմբերի համար հարմարեցված սանհանգույցներ, թեքահարթակներ՝ մուտքերում, ինչպես սակավաշարժ խմբերի, այնպես էլ՝ հիվանդների և այլ այցելուների համար:
32. Շենքում նախագծվել են երկու վերելակներ՝ մարդատար և բեռնատար: Ըստ գործող շինարարական նորմերի՝ նախատեսվում է նաև նոր էլեկտրասնուցման և լուսավորության ցանցեր, արտաքին և ներքին ջրամատակարարման, կոյուղու և գազամատակարարման ցանցեր, ինչպես նաև նոր օդափոխության և ջեռուցման համակարգեր:
33. Էներգոարդյունավետության և ջերմամեկուսացման տեխնիկական լուծումների տեսանկյունից նախատեսվում է բոլոր պատերի՝ արտաքինից, հարթ տանիքների ջերմամեկուսացում միջոցառումներ:
34. Կոնստրուկտիվ լուծումների տեսանկյունից, բոլոր մասնաշենքերը նախագծվում են միաձույլ ե/բ կրող կոնստրուկցիաներով, ներառյալ՝ հիվանդանոցի շենքի հիմքերը, այլուները, հեծանները և միջհարկային սալերը: Արտաքին պատերում նույնպես օգտագործվելու են ե/բ կոնստրուկտիվ լուծումներ:
35. Նախագծվող շենքերում բաժանումները կիրականացվեն պեմզաբլոկով, կտեղադրվեն նոր այլումինե ջերմակամուրջով պատուհաններ և արտաքին դռներ: Ըստ ֆունկցիոնալ նշանակության՝ կտեղադրվեն նաև ներքին մետաղեպլաստե, այլումինե և հատուկ ճառագայթապաշտպան դռներ, ներքին վիտրաժներ:
36. Մասնաշենքերի արտաքին ճակատների հարդարման աշխատանքներում կօգտագործվեն ֆիբրոցեմենտային և բազալտե սալերով երեսպատման լուծումներ: Ներքին հարդարման լուծումներում նախատեսվում է իրականացնել ջրակայուն լատեքսային բարձրորակ ներկեր, իսկ վիրահատարաններում և ինտենսիվ թերապիայի բաժանմունքներում՝ հակասեպտիկ լատեքսային ներկեր: Նախատեսվում են «արմատոնգ» տիպի կախովի

Մասիսի բժշկական կենտրոնի կառուցում

առաստաղներ, վինիլային հատակներ՝ հիվանդասենյակներում և պոլիկլինական բաժանմունքում, հակաստատիկ վինիլային ծածկույթ՝ վիրահատարաններում և ինտենսիվ թերապիայի բաժանմունքում: Առաջին հարկի միջանցքներում կիրականացվեն կերամոզրանիտե հատակներ, իսկ սանհանգույցում՝ խեցեսալիկներ:

37. Բկ-ի համալիրի հյուսիս-արևմտյան մասում գործող կաթսայատան շենքի հարևանությամբ նախատեսվում է նոր կաթսայատան կառուցում, որին կից կտեղակայվի հեղուկ վառելիքի համար նախատեսված պահեստարան:
38. Հատակագծում ավտոկայանտեղին նախատեսվում է տարածքի հյուսիս-արևելյան հատվածում, գոյություն ունեցող մանկական թերապիայի շենքին կից և նոր կառուցվող շենքի արևելյան հատվածում:
39. Կառուցապատվող տարածքի հյուսիս-արևմտյան հատվածում են կտեղակավեն արևային ջրատաքացուցիչները, իսկ հյուսիս-արևելյան հատվածում՝ նախատեսվում է արևային ֆոտովոլտային կայանը:
40. Ներկայացվող գործունեության հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշները բերվում են Աղյուսակ 1.-ում:

Նկ. 2 Մասիսի ԲԿ-ի գլխավոր հատակագիծը:



Մասիսի բժշկական կենտրոնի կառուցում

Աղ.1 Վերակառուցման աշխատանքների հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշները:

ՑՈՒՑԱՆԻՇԸ	ՄԻԱՎՈՐ	ԾԱՎԱԼ
Կառուցապատվող տարածքի ընդհանուր մակերեսը		
Կառուցապատման աշխատանքների ընդհանուր մակ.	ք.մ	21 943
Կառուցապատման մակերեսը		
հիմնական շենք	ք.մ	2 246
օժանդակ կառույցներ	ք.մ	215
Բարեկարգում		
բարեկարգվող գոտու մակ.	ք.մ	19 482
Ճանապարհ, անցուղի և ավտոկայանտեղի	ք.մ	9099
մայթեր և եզրաքարեր	ք.մ	2 881
կանաչապատում	ք.մ	7 502
Ինժեներական ցանցեր		
ջրամատակարարում	լ/վրկ	2.5
կոյուղի	լ/վրկ	4.1
Ջեռուցում		
կաթսաների քանակը, 300 կվտ-ժամ	հատ	6
Տաք ջրամատակարարում		
արևային ջրատաքացուցիչ (3 կվտ, 1 000լ)	հատ	3
Արևային էլեկտրաէներգիայի մատակարարում		
արևային ֆոտովոլտային կայան	կՎտ	150

4.2 Բարեկարգում և կանաչապատում

41. Ներկայացվող գործունեության ընթացքում կիրականացվի ԲԿ-ի տեղամասի շուրջ 19 482ք.մ մակերեսով տարածքի բարեկարգում և կանաչապատում, որի շրջանակում նախատեսվում է երթևեկելի հատվածների, անցուղիների և նախագծվող ավտոկայանտեղու ասֆալտապատման աշխատանքներ (9099 ք.մ), մայթերի ստեղծման, ասֆալտե ծածկի և բազալտե եզրաքարերի իրականացում (2 881 ք.մ) և նոր կանաչապատ գոտու (7 502 ք.մ) ստեղծում:

Մասիսի բժշկական կենտրոնի կառուցում

42. Կանաչապատման աշխատանքների շրջանակում նախատեսվում է արժեքավոր ծառատեսակների և բուսատեսակների տնկում, որոնց ընտրությունը կատարվել է հաշվի առնելով տեղանքի բնակլիմայական պայմանները: Այսպիսով, կանաչ գոտիներում կտնկվեն 171 հատ ծառատեսակներ (*արևելյան սոսի, սրատերև թխկի, լենքորանյան ալբիցիա, արծաթափայլ եղևնի, լացող ուռենի, սյունաձև թույս*), 53 հատ թփատեսակներ (*սովորական եղևնանի և թելատու արմավաշուշան*), կիրականացվի 270 գ.մ թփերով ճեմապատում (*տոսախ մշտադալար և կիպրոս սովորական*) և 2 333 ք.մ սիզամարգերի ստեղծում: Կանաչապատման նախագիծը ներկայացվում է Նկ.3-ում:
43. Կանաչապատման աշխատանքներում կօգտագործվի շուրջ 2 080 խ.մ ծավալով տեղամասից մերկացված բուսահողը:
44. Նորաստեղծ կանաչ գոտիների ոռոգման կազմակերպման համար, ըստ նախագծի, նախատեսվում է ոռոգման ցանցի իրականացում: Հաշվի առնելով Մասիսի համայնքում ոռոգման համայնքային ջրագծի բացակայությունը և ոռոգման ջրի հետ կապված համայնքային խնդիրները՝ գոտու ոռոգումը ժամանակավոր առաջարկվում է իրականացնել խմելու ջրով: Հետագայում ոռոգման ջրով ապահովվելու գործընթացը կկազմակերպվի ԲԿ-ի և Մասիսի համայնքի ուժերով:
45. Հատակագծում հաշվի են առնված ինքնահոս եղանակով մակերևութային ջրերը դեպի կանաչապատ գոտիներ հեռացնելու լուծումները:
46. Նորատունկ բուսականության խնամքը կհանձնվի ԲԿ-ի տնօրինությանը, իսկ բուսականության վիճակի մշտադիտարկումները կիրականացվեն Ծրագրի պատվիրատու կողմից՝ ըստ հաստատված մոնիտորինգային պլանի: Ծրագրի շրջանակում գործող հետշինարարական մոնիտորինգը սահմանվում է մեկ տարի, որի ընթացքում կպաշտպանություն չապահովող ծառատեսակները կփոխարինվեն նորերով:

4.3 Ջրամատակարարում և ջրահեռացում

47. Նախագծվող ԲԿ-ի ջրամատակարարման և ջրահեռացման գործընթացները կազմակերպվելու են գործող շինարարական նորմերի ու կանոնների, ինչպես նաև «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի կողմից տրամադրված ԱԸ-597 տեխնիկական պայմանի (*Հավելված 5.*) համաձայն (26/12/2019թ.): Այսպիսով, ԲԿ-ի ջրամատակարարման գործընթացը կկազմակերպի 3-րդ Հերացի փողոց 21 հասցեի հարևանությամբ անցնող համայնքային d=200 մմ ջրագծին միացմամբ:
48. Կոյուղաջրերի և կենցաղային ջրերի հեռացումը՝ ըստ տեխնիկական առաջադրանքի, նախատեսվում է իրականացնել 3-րդ Հերացի փողոց 21 հարևանությամբ անցնող համայնքային d=300 մմ կոյուղագծին միացմամբ:
49. Տաք և սառը ջրամատակարարման հաշվարկային ելքերն որոշվել են հաշվի առնելով ԲԿ-ի տեխնոլոգիական պահանջները և սպասարկվող մարդկանց քանակը: Համաձայն գործող շինարարական նորմերի՝ անհրաժեշտ ջրի քանակը հաշվարկվում է $Q_{max}/վրկ=1.6$ վ/վրկ, իսկ շենքի հրդեհմարման համար անհրաժեշտ ջրի քանակությունը՝ 4.1 վ/վրկ:
50. ԲԿ-ի տաք ջրամատակարարումը նախատեսվում է իրականացնել արևային 3 ջրատաքացուցիչների միջոցով (տես Աղ.1-ում) և կաթսայատան միջոցով:
51. Նախագծվող ԲԿ-ի տարածքից մակերևութային ջրերի հեռացումը նախատեսվում է իրականացնել ինքնահոս եղանակով՝ տարածքի բնական և նախագծային լուծումներով նախատեսվող թեքությունների հաշվին, դեպի տարածքի նորաստեղծ կանաչ գոտիներ:

4.4 Ջեռուցում

52. Նախագծվող ԲԿ-ի ջեռուցումը կիրականացվի նոր կաթսայատան միջոցով, որը հատակագծում տեղակայված է կենտրոնի գործող կաթսայատան շենքի հարևանությամբ (*Նկ. 1*): Կաթսայատան շահագործումը կիրականացվի ջրային վեց կաթսաների (գոյություն ունեցող կաթսայատան 4 կաթսաները նախատեսվում են վերատեղադրել) միջոցով բնական գազի այրմամբ: Նախագծվող ԲԿ-ում կաթսայատան հարևանությամբ նախատեսվում է նաև հեղուկ վառելիքի համար նախատեսված պահեստարան:
53. Կաթսայատան ջուրն օգտագործվելու է միայն ջրաջեռուցիչ կաթսաների և ջերմային ցանցերի միանվագ լցման համար, որը հետագայում կլրասնուցվի համակարգում ջրային կորուստների առաջացման դեպքում: Արտադրական հոսքաջրերի առաջացումը բացառվում է, քանի որ կաթսայատանը ջրապատրաստման գործընթաց չի նախատեսվում:

4.5 Գազամատակարարում և էլեկտրասնուցում

54. Նախագծող ԲԿ-ի գազաֆիկացման գործընթացը կկազմակերպվի գործող «Մասիսի ԲԿ-ի» գազաֆիկացման եղանակով, քանի որ նորակառույց ԲԿ-ի գազասպառման ծավալները չեն գերազանցում գործող ԲԿ-ի ծավալներին: Այսպիսով, ԲԿ-ի գազաֆիկացման համար, համաձայն «Գազաբոմ Արմենիա» ՓԲԸ-ի 29/03/2013թ. տրամադրված N01-02/309 տեխնիկական պայմանի (*Հավելված 6.*), նախատեսվում է իրականացնել ինչպես և նախկինում Մասիս քաղաքը սնուցող $d=89$ մմ, $P=1.3$ կգ/ք.սմ գազատարից՝ N90ՊՃԿԿ կետից միացմամբ:
55. էլեկտրասնուցման գործընթացը, համաձայն «Հայաստանի էլեկտական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից 16/12/2019թ. տրամադրված տեխնիկական պայմանների (*Հավելված 6.*), կկազմակերպվի ՏԵ5750-ի 0.4 կՎ հզորության վահանից:

4.6 Շինարարական աշխատանքների կազմակերպում

56. Ներկայացվող գործունեության ընթացքում նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները.

- հիվանդանոցի շենքի և կցակառույցի, շտապօգնության բաժանմունքի ապամոնտաժում
- հիվանդանոցի նոր շենքի և օժանդակ կառույցների կառուցում
- տարածքի բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ:

57. Համաձայն մշակված շինարարական աշխատանքների կազմակերպման նախագծի՝ *նախաշինարարական աշխատանքների* փուլում կիրականացվեն շինարարական հրապարակի կազմակերպման աշխատանքները: Շինարարական հրապարակի կազմակերպման և ապամոնտաժման աշխատանքների նախագիծը բերվում է *Հավելված 8. -ում*: Հրապարակի կազմակերպումը կիրականացվի բացառապես ԲԿ-ի տարածքի վարչական սահմանների ներսում և կազմակերպման պլանում հաշվի են առնված գործող նորմերով պահանջվող միջոցառումները, մասնավորապես՝

- ԲԿ-ի տարածքի ժամանակավոր մետաղական ցանկապատում
- հրապարակի լուսավորության ապահովման միջոցառումները
- ժամանակավոր կառույցների տեղադրման աշխատանքները՝ ապահովելով շինարարական ճամբարում սանիտարահիգիենիկ, կենցաղային և հանգստի պայմանները (ընդմիջման և հանգստի հարմարություններ, խմելու և կենցաղային կարիքների ջուր, զուգարան, աշղեկի աշխատասենյակ և այլն)
- շինանյութերի ժամանակավոր պահեստավորման և թափոնների կուտակման ժամանակավոր վայրերը
- շինաշխատանքներում անհրաժեշտ հիմնական մեքենա-սարքավորումների կայանատեղիները:

58. Նախաշինարարական փուլում կիրականացվեն նաև կոմունիկացիաների վերատեղադրման, տեղափոխման և միացման աշխատանքները՝ գոյություն ունեցող կոմունիկացիաներին:

59. Շինարարության փուլում իրականացվող ապամոնտաժման և կառուցապատման գործողությունների նկարագրությունները բերվում է ստորև ներկայացվող ենթաբաժիններում:

4.6.1 Ապամոնտաժման աշխատանքների կազմակերպում

60. Մասիսի ԲԿ-ի գոյություն ունեցող շենքը կազմված է 4 մասնաշենքերից՝ եռահարկ գլխավոր մասնաշենքից (N3 ըստ հատակագծի համարակալման), երկհարկանի 2 մասնաշենքերից (N1 և N4) և միահարկ մասնաշենքից (N2): Մասնաշենքերի ապամոնտաժման գործողությունների հաջորդականությունը և ժամանակացույցը ներկայացված է *Հավելված 9*-ում: Մասնաշենքերը նախատեսվում է ապամոնտաժել հաջորդաբար՝ ըստ նախագծի N1-ից N4 հերթականությամբ: Կախված աշխատանքների բնույթից՝ որոշ շինմոնտաժային գործողությունները մասնաշենքերում կիրականացվեն միաժամանակ: Ապամոնտաժման գործողությունների ընդհանուր տևողությունը հաշվարկվում է մոտ *5 ամիս* կամ 150 օր, ներառյալ՝ նախաշինարարական աշխատանքները:

61. Նախքան ապամոնտաժման աշխատանքների սկսումը նախատեսվում է իրականացնել մոնոլիտ տեղամասերի կառուցում և ապամոնտաժվող կոնստրուկցիաների ամրակապում, որպեսզի շին գործողությունների ընթացքում խուսափեն շենքի անցանկալի փլուզումներից և արտակարգ իրավիճակներից:

62. Ապամոնտաժման աշխատանքներում կօգտագործվեն ձեռքի կտրող գործիքներ և կբացառվեն այլ խոշոր քանդող տեխնիկայի կիրառումը: Ըստ նախագծի՝ հաջորդաբար կապամոնտաժվեն մասնաշենքերի ներքին և արտաքին դռները, պատուհանները ապա կիրականացվեն միջնորմերի, հատակների, տանիքի, սալերի, հեծանների և պատերի, սյուների ապամոնտաժումը:

63. Ապամոնտաժման աշխատանքներում ներգրավված աշխատողների առավելագույն թիվը գնահատվում է 25 մարդ, որից ինժեներական կազմը՝ 2 մարդ, ծառայողական աշխատողներ՝ 3 մարդ, մնացածը՝ բանվորներ:

4.6.2 Կառուցապատման աշխատանքների կազմակերպում

64. Նախագծվող ԲԿ-ի շին աշխատանքները նախատեսվում է իրականացնել քանդման/ապամոնտաժման աշխատանքների ավարտից, տարածքը ժամանակավոր կառույցներից ազատելուց և մաքրելուց հետո: Հիվանդանոցի համալիրի կառուցման գործողությունները գնահատվում են *30 ամիս*: Շինարարական աշխատանքների իրականացման հաջորդականությունը և ժամանակացույցը բերվում է *Հավելված 10*-ում:

65. Ներկայացվող գործունեության հողային աշխատանքների ընթացքում, որոնք հաշվարկվում են մոտ 1.5 ամիս կհեռացվի շուրջ 2 700 խ.մ հողային հանույթ, որը ամբողջությամբ կօգտագործվի հետլիցքի նպատակով և հողային բարեկարգման աշխատանքներում:

66. Տարածքից կմերկացվի շուրջ 2 080 խ.մ բուսահող, որը կպահպանվի ԲՄԾ-ով նախատեսված միջոցառումներին համաձայն և կօգտագործվի տարածքի կանաչապատման աշխատանքների շրջանակում:

67. Շինարարական աշխատանքների իրականացումը կիրականացվի մրցութային կարգով ընտրված շինարար կապալառուի կողմից: Շինարարության ընթացքում կօգտագործվեն շինարարական կազմակերպության շինարարական մեքենաները և մեխանիզմները, իսկ բացակայության դեպքում կիրականացվի անհրաժեշտ տեխնիկայի վարձակալություն:

68. Աղյուսակ 2.-ում բերվում են աշխատանքների ընթացքում պահանջվող ռեսուրսների քանակը:

Աղ. 2 Շինարարության ընթացքում պահանջվող ռեսուրսների քանակը:

Անվանումը	Չափման միավորը	Քանակ
Էլեկտրաէներգիա	ԿՎտ	516.6
Վառելիք	տ	244.4
Գոլորշի	Կգ/ժամ	504.0
Թթվածին	խմ	12 540
Վառելիք	տ	16.3
Ջուր (արտադրական)	լ/վրկ	0.855
Խտացրած օդ (կոմպրեսոր)	հատ	10

69. Շինարարության ընթացքում անհրաժեշտ մնացած նյութատեխնիկական ռեսուրսների մատակարարումը կիրականացվի լիցենզավորված կազմակերպություններից և գլխավոր կապալառու կազմակերպության արտադրական բազայից: Շինարարության ընթացքում անհրաժեշտ ջրի քանակը նախատեսվում է վերցնել տարածքով անցնող ջրագծից: Պահանջվող էլեկտրաէներգիայի մատակարարումը և հրապարակի լուսավորությունը կիրականացվի տարածքում առկա ՏԵ5750-ի 0.4 կՎ հզորության վահանից: Շինմեխանիզմների համար անհրաժեշտ վառելիքի քանակը ապահովվելու է շինարարական հիմնարկի պահեստերից:

70. Կբացառվի հրապարակում բետոնաշաղախային խառնուրդի պատրաստման գործընթացը: Համապատասխան մակնիշի բետոնախառնուրդի առաքումը դեպի հրապարակ կիրականացվի բետոնախառնիչներով Մասիս համայնքին մոտ բետոնաշաղախային հանգույցներից՝ կապալառուի հետ պայմանագրային հիմունքներով և համապատասխան առաքման հաճախականությամբ՝ ապահովվելով աշխատանքների կատարման անընդհատությունը:

71. Բկ-ի համալիրի կառուցման շինաշխատանքներում աշխատողների առավելագույն թիվը գնահատվում է 35 մարդ, որից ինժեներական կազմը՝ 2 մարդ և ծառայողական աշխատողներ՝ 3 մարդ, մնացածը՝ բանվորներ:

5 ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ԲԱՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

5.1 Տեղանքի ռելիեֆը և երկրաբանությունը

72. Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքում գործող «Մասիս բժշկական կենտրոնի» տարածքում: Մասիս համայնքը գտնվում է Արարատյան հարթավայրի կենտրոնական հատվածում, Հրազդան գետի ստորին հոսանքի ավազանում:

73. Երկրաբանական կառուցվածքի և տեկտոնիկայի գոյություն ունեցող ուսումնասիրությունների համաձայն՝ բնութագրվող տեղանքի երկրաբանական կառուցվածքի ձևավորմանը մասնակցում են գրունտների հզոր շերտախումբ: Գրունտների վերին շերտերում մեծ տարածում ունեն ժամանակակից և էոցեն-միոցենի գետալճային, կրաքարային և հրաբխածին տարբեր հզորությունների գրունտներ:

74. Տեղանքի *երկրաբանա-լիթոլոգիական* կառուցվածքը, համաձայն իրականացված ուսումնասիրությունների և գոյություն ունեցող գրական տվյալների, վերնից-ներքև ներկայացված է գրունտների հետևյալ տարատեսակներով.

Շերտ – 1 Բուսահող, ավազակավային խառնուրդով՝ տարածված մինչև 0.9-1.0 մ հզորություններում:

Շերտ – 2 Ներքին և միջին միոցենի հասակի կավեր, բաց մոխրագույն, քիչ կրային խառնուրդով, փոշենման, առածգական, ծակոտկեն և խոնավ, խճավազային խառնուրդը մինչև 5 % :

Շերտ – 3 Կավեր՝ խճային պարունակությունը մինչև 20 %, տարածված են 3-5մ հզորությամբ և առանձնացված են որպես փոքր ճնշումով ջրատարեր:

Շերտ – 4 Բաց դարչնագույն կավեր՝ փոշենման, հոծ, պինդ, առածգական, խոնավ և ծակոտկեն, տարածված են 5-7. 7 մ հզորությունում:

75. *Տեղանքի ինժեներաերկրաբանական պայմանները* գնահատվում են բարենպաստ նախագծվող բժշկական կենտրոնի շինարարական աշխատանքների իրականացման համար, սակայն հաշվի առնելով տարածված կավերի պլաստիկ հատկությունները՝ անհրաժեշտ է նախատեսել հիվանդանոցի հիմնատակի բնահողերի ամրացման աշխատանքներ՝ ըստ տեղամասի ինժեներաերկրաբանական եզրակացության: Նախագծվող տարածքում բացակայում են շինարարության և կառուցվածքների վրա ազդող բնական երևույթները (սողանքներ, կարստ, փլուզումներ և այլն):
76. *Հիդրոերկրաբանական տեսակետից*, ստորգետնյա ջրերի մակարդակը տեղամասում գտնվում է 2.8-3.5մ խորության վրա և բնութագրվում է մակարդակների սեզոնային տատանումներով: Ուսումնասիրությունների արդյունքում հորատանցքերում դրանք հայտնաբերվել են 3.5-4.0 մ-ի վրա և փոքր ճնշումների հետևանքով ջրերը կարող են բարձրանալ մինչև 1.0 մետր խորություն:

5.2 Սեյսմիկ բնութագրերը

77. Համաձայն ՀՀՇՆ II-6.02-2006 «Սեյսմակայուն շինարարության նախագծման նորմեր»-ի և ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիավորման քարտեզի՝ Մասիս համայնքը գտնվում է սեյսմիկ *երրորդ գոտում*: Գրունտների հնարավոր սեյսմիկ արագացումները կազմում են $A = 0.4g$ և ունի *9 և ավելի* բալ սեյսմիկ ռիսկայնության աստիճան:

5.3 Կլիմայական պայմանների հակիրճ նկարագրությունը

78. Բնութագրվող տարածքը գտնվում է «Տաք» կլիմայական շրջանում, որին բնորոշ է չոր ցամաքային կլիման՝ ըստ ՀՀ շինարարական կլիմայաբանության (ՀՀՇՆ II-7.01-2011):

79. Օդի հուլիսյան ջերմաստիճանը տատանվում է +22 °C-ից +26 °C տիրույթում, իսկ հունվար ամսի միջին ջերմաստիճանը դիտվում է -5-0°C °C: Տարեկան մթնոլորտային տեղումների քանակը հասնում է 200-300 մմ: Քամու միջին արագությունը կազմում է 2-3 մ/վրկ:

5.4 Բնապահպանական հատուկ տարածքներ և պատմամշակութային հուշարձաններ

80. Գործունեության իրականացման տեղանքին հարակից չկան արգելոցներ, ազգային պարկեր կամ հատուկ նշանակության պահպանվող տարածքներ, ինչպես նաև բնութագրվող տարածքում և տարածքի մերձակայքում չկան ազդեցության ենթակա պատմամշակութային հուշարձաններ:

5.5 Օդային ավազան

81. Օդային ավազանի աղտոտվածության մոնիտորինգային աշխատանքները կատարվում են ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն» (ՇՄՏՄԿ) ՊՈԱԿ-ի կողմից: Հաշվի առնելով այն, որ Մասիս համայնքում մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկումները բացակայում են, սույն հայտում բերվում են օդային ավազանի ֆոնային կոնցենտրացիաների հաշվարկային արժեքները:

82. ՀՀ բնակավայրերի (բացառությամբ Երևան, Վանաձոր, Արարատ, Հրազդան և Գյումրի քաղաքների) մթնոլորտային օդն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաների արժեքները ներկայացված են Աղյուսակ 3-ում, որոնց հաշվարկները կատարվել են ըստ տվյալ բնակավայրի ազգաբնակչության թվաքանակի:

83. ՀՀ բնակավայրերի ազգաբնակչության թվաքանակը ընդունված է համարել ՀՀ-ի ազգային վիճակագրական ծառայության (ԱՎԾ) 2011 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ վիճակագրական տեղեկագրում բերված տվյալները: Համաձայն ՀՀ ԱՎԾ վիճակագրական տեղեկագրի՝ Մասիսի համայնքում բնակչության թվաքանակը կազմել է 20 500 մարդ:
84. Ելնելով նշված թվաքանակից և ֆոնային կոնցենտրացիաների հաշվարկային արժեքներից (Աղ.3), Մասիս համայնքում աղտոտիչների ֆոնային կոնցենտրացիաների արժեքները գնահատվում են հետևյալ տիրույթում. *փոշու մասնիկներ՝ 0,3 մգ/մ³, ածխածնի մոնօքսիդ՝ 0,8 մգ/մ³, ազոտի երկօքսիդ՝ 0,015 մգ/մ³ և ծծմբի երկօքսիդ՝ 0,05 մգ/մ³:*
85. Նշված մակարդակները գտնվում են ՀՀ գործող նորմերի (ՀՀ որոշում 160-Ն, 2006 թ.) սահմանում, բացառություն է կազմում ընդհանուր փոշու մասնիկները, որոնց ֆոնային կոնցենտրացիան մոտ 1.5 անգամ գերազանցում է գործող ՍԹԿ-ն (ՍԹԿ_{փոշի} = 0,15 մգ/մ³):

Աղ. 3 Մթնոլորտն աղտոտող որոշ նյութերի ֆոնային կոնցենտրացիաները՝ հաշվարկված ըստ բնակավայրերի ազգաբնակչության թվաքանակի (2011թ.-ի մարդահամար):

Բնակչության քանակը (հազ.)	Նյութերի ֆոնային կոնցենտրացիաները, (մգ/մ ³)			
	Ընդհանուր փոշի	Ծծմբի երկօքսիդ	Ազոտի երկօքսիդ	Ածխածնի օքսիդ
50 -125	0,4	0,05	0,03	1,5
10 - 50	0,3	0,05	0,015	0,8
< 10	0,2	0,02	0,008	0,4

5.6 Հողային ռեսուրսները և հողօգտագործումը

86. Կառուցապատվող տարածքը հանդիսանում է Մասիսի ԲԿ-ի անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով (պետական գրանցման No 2426210 վկայական, *Հավելված 11.*) տրամադրված գույք: Կառուցապատվող տարածքում ձեռնարկատիրական որևէ գործունեություն չի իրականացվում և հողատարածքը ամբողջությամբ օգտագործվում է ԲԿ-ի կողմից:
87. Բնութագրվող տարածքն ազատ երթևեկելի գոտիներում ներկայացված է կիսաքանդ ասֆալտե ծածկույթով, որի որոշ հատվածներում նկատելի են նաև ինքնաբերաբար աճած բուսականություն: Տարածքում առկա են նաև կանաչ գոտիներ (5.8 ենթաբաժին):

5.7 Ջրային ռեսուրսներ

88. Հիդրոերկրաբանական տեսակետից, ըստ բնութագրվող տեղանքի մասին գոյություն ունեցող գրական տվյալների և կատարված հետազոտությունների՝ գրունտային ջրերը գտնվում են 3.5-4.0 մ խորություններում և ունեն մակարդակների տաստանման սեզոնայնություն:
89. Նախագծվող ԲԿ-ի տարածքին հարակից այլ մակերևութային ջրային մարմիններ չկան:

5.8 Բուսական աշխարհ

90. Բնութագրվող տարածքում առկա են կանաչ գոտիներ, որտեղ աճում են տարբեր տարիքի ծառատեսակներ և թփեր: Կանաչ գոտիները չունեն ոռոգման համակարգ:

91. Տեղանքում կատարված դենդրոլոգիական ուսումնասիրությունների համաձայն՝ առկա բուսականության մոտ 30 %-ը գնահատվել է չորացած կամ չորացման եզրին, իսկ սանիտարական վիճակի տեսանկյունից՝ հասուն ծառերի մոտ դիտվել է բնափայտի փտում:
92. Բնութագրվող ծառերի մեծ մասը նախկինում տնկվել է շենքերի հարևանությամբ (մոտ 1-2 մ) և ներկայումս խոշոր չափերի պատճառով կպած են շինությունների պատերին կամ սերտաճած են հիմքերի հետ, իսկ ժամանակի ընթացքում ձևավորված արմատային համակարգը խարխլման վտանգ է ներկայացնում շենքի հիմքերին: Մի շարք ծառատեսակներ (թեղի ու թթենի) աճելով սերմերից կամ մացառներից ունեն անկանոն տարածվածություն և աճելով միմյանց շատ մոտ չեն ապահովում աճի համար բավարար լուսավորություն և սաղարթի ձևավորման հեռավորություն:
93. Առաջարկվել է շինություններին անմիջապես մոտ գտնվող փտած և վնասված ծառերը փոխարինել էկոլոգիական, գեղագիտական և կանաչապատման տեսանկյունից ավելի արժեքավոր բուսատեսակներով:
94. Աշխատանքներին խանգարող ավելի երիտասարդ (3-4 տարեկան) ծառերի համար առաջարկվել է իրականացնել վերասնկում:
95. Բնութագրվող տարածքը գտնվում է զարգացած համայնքային միջավայրում, ուստի տեղանքում չկան որևէ էնդեմիկ կամ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ և կենդանական տեսակներ, ինչպես նաև բացակայում են տարածքով անցնող միգրացիոն ուղիները՝ տարածքի և հարակից վայրերի յուրացված և ուրբանացված լինելու պատճառով:

6 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

96. Նախատեսվող գործունեության ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները և հնարավոր ռիսկերը գնահատվում են ԲԿ-ի ապամոնիտաժման և վերակառուցման աշխատանքերի ընթացքում, մասնավորապես՝ գնահատվում են անօրգանական փոշու և այլ ծխագազերի արտանետումներ և աղմուկի մակարդակի աճ շին-գործողությունների ընթացքում, սակայն նշված ազդեցությունները կկրեն ժամանակավոր բնույթ և կլինեն տեղայնացված՝ հիմնականում ընդգրկելով ներկայացվող գործունեության տարածքը: Ինչպես նաև հաշվի առնելով նախատեսվող շինարարական աշխատանքների բնույթը և ծավալը՝ ըստ աստիճանի և ինտենսիվության բոլոր բացասական ազդեցությունները և ռիսկերը շրջակա միջավայրի վրա կլինեն մինիմալ և կառավարելի:

6.1 Շինարարության փուլ

6.1.1 Օդային ավազանի աղտոտվածություն և մեղմացման միջոցառումները

97. Ծրագրի ընթացքում հիմնականում կանխատեսվում են անօրգանական փոշու ժամանակավոր արտանետումներ հողային աշխատանքների ընթացքում: Հորատման, բեռնման, թափոնակույտման աշխատանքների ընթացքում հողային հանույթից փոշու արտանետումները կարելի է հաշվել ստորև բերված արտահայտությամբ՝

$$Q = K_1 \times K_2 \times K_3 \times K_4 \times K_5 \times K_6 \times B \times G \times 10^6 / 3600, \text{ գ/վ}$$

որտեղ`

K₁ –ը փոշու զանգվածային բաժինն է հողային հանույթում, 0.05

K₂ –ը` փոշու մասնաբաժինը, որը կարող է անցնել աեռոզոլային մասնիկների, 0.02

K₃ –ը գործակից է, որը հաշվի է առնում քամու միջին արագությունը (մ/վ), 2.5

K₄ –ը գործակից է, որը հաշվի է առնում տարածքի պայմանները, 1

K₅ –ը գործակից է, որը հաշվի է առնում հանույթի խոնավությունը, 0.4

K₆ –ը գործակից է, որը հաշվի է առնում հանույթի չափերը, 0.1

B-ն գործակից է, որը հաշվի է առնում հողաթափման բարձրությունը, 0.6

G –ն` հողային հանույթի զանգվածն է 1 ժամում, տ/ժ

Հողային աշխատանքների ընդհանուր տևողությունը հաշվարկվում է 1ամիս կամ

1 ամիս x 22 օր x 8 ժամ = 176 ժամ/շինարարություն:

Հողային հանույթի ընդհանուր զանգվածը գնահատվում է 2 700 խ. մ կամ 9 271 տոննա:

9 271 տոննա /176 ժամ = 52.68 տ/ժ

Այսպիսով`

$Q=(0.05 \times 0.02 \times 2.4 \times 1 \times 0.4 \times 0.1 \times 0.6 \times 52.68 \times 10^6) / 3600 = 0.84$ գ/վ կամ

գումարային փոշու արտանետումները հողային աշխատանքների ժամանակ կկազմի`

$0.84\text{գ/վ} \times 176 \text{ ժ/շ} \times 3600 \text{ վ} / 10^6 = 0.53$ տ

98. Շինարարության ընթացքում վերը նշված արտանետումները կլինեն տեղայնացված և չեն դիսպերսվի ԲԿ-ի սահմաններից դուրս` հաշվի առնելով մասնիկների մեծ չափերը և դրանց արագ գրավիմետրիկ նստելու հատկությունը: Հետևաբար, փոշու արտանետումները չեն գերազանցի ՀՀ թույլատրված նորմերը, իսկ մթնոլորտային

ավագանում դրանց հնարավոր տարածումը և շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցությունները կկանխարգելվեն և/կամ կնվազեցվեն բնապահպանական միջոցառումների ծրագրում ներկայացված միջոցառումների իրականացմամբ, մասնավորապես՝

- շինարար կապալառուն պարբերաբար կիրականացնի շինարարական հրապարակի ջրցանման և փոշենստեցման գործողություններ
- շինարարական մեքենաների երթևեկությունը կկազմակերպվի համապատասխան չափաքանակներով և ծածկող պաստառների առկայությամբ, սահմանափակ 30կմ/ժ-ը չզերազանցող արագությամբ
- փոշի առաջացնող նյութերը (ավազ, խիճ և այլն) շինարարական հրապարակում կպահվեն պաստառներով ծածկված վիճակում
- աշխատանքների ընթացքում պատշաճ մակարդակով կվերահսկվի նաև մեքենա-սարքավորումների տեխնիկական վիճակը:

99. Օդային ավազանի պաշտպանությանն ուղղված միջոցառումների ցանկը ներկայացվում է *Աղյուսակ 6.-ում (տես 2. ենթաբաժին, Օդի աղտոտում և փոշու կառավարում)*:

6.1.2 Աղմուկի և թրթռումների ազդեցություն և մեղմացում

100. Շինարարական աշխատանքների ընթացքում աղմուկի մակարդակի գերազանցումներ ՀՀ-ում սահմանված նորմերից չի կանխատեսվում, քանի որ աշխատանքներում օգտագործվող մեքենա-սարքավորումները կշահագործվեն բացառապես աղմկակլանիչների և խլացուցիչների առկայության դեպքում: Բացի այդ հիմնական աղմուկ առաջացնող գործողությունները կիրականացվեն միայն կեսօրվա ժամերին, այն է՝ ժամը **14:00-ից 18:00:**

101. Շինարարական գործողությունների ընթացքում առաջացող թրթռումներից ազդեցություններ հարևան ազդակակիրների վրա չեն գնահատվում՝ հաշվի առնելով հարևանությամբ գտնվող ազդակակիրների հեռավորությունը նախագծվող ԲԿ-ի տարածքից (≥ 200 մ): Շինարարական աշխատանքների ընթացքում շինարար կապալառուն պարտավոր է հետևել ՀՀ-ում թրթռումների գործող նորմերը, քանի որ ծրագրի շրջանակում հարակից կառույցների վրա հասցրված ցանկացած ֆիզիկական վնասը կվերացվի շինարար կապալառուի կողմից՝ սեփական միջոցների հաշվին:

102. Աղմուկի և թրթռումների մակարդակների կառավարմանն ուղղված մեղմացնող միջոցառումներն առավել մանրամասն ներկայացված են *Աղյուսակ 6.-ում (տես 2. ենթաբաժին, Աղմուկի և թրթռումների մակարդակների կառավարում)*:

6.1.3 Ջրօգտագործում և ջրային համակարգերի վրա ազդեցություն

103. Շինարարական աշխատանքների ընթացքում ջուրը հիմնականում օգտագործվելու է շինհրապարակի ջրցանման, մաքրման և որոշ շինաշխատանքների կազմակերպման, ինչպես նաև կապալառուի աշխատակազմի խմելու և կենցաղային կարիքները հոգալու համար:

104. ԲԿ-ի մասնաշենքերի ապամոնտաժման և նոր շենքի կառուցման աշխատանքների ընթացքում առաջացած հնարավոր փոշու մակարդակները կնվազեցվեն ջրցանի իրականացմամբ:

105. *Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսի հաշվարկը բերվում է ստորև.*

$$V = S \times K \times T \times K_1$$

որտեղ՝

S – ջրցանվող տարածքի մակերեսն է՝ 19 482 ք.մ

$K - 1 \text{ մ}^2$ օրական ջրցանի նորմատիվն է՝ 0.0015 մ^3 ,

T – ջրցանի օրերը (տաք և չորային եղանակին)՝ $22 \text{ օր} \times ((30+5) - (6 \text{ (նոյեմբեր-մայիս)} * 3))$ ամիս = 374 օր

K_1 - ջրցանի օրական քանակը՝ 1

Այսպիսով՝ $V = 19\,482 \times 0.0015 \times 374 = 10\,929 \text{ մ}^3$ /շինարարություն ժամանակ

Շին աշխատանքների ամբողջ ընթացքում ջրցանի նպատակով ծախսվող ջրի քանակը կկազմի $10\,929 \text{ մ}^3$:

106. *Կապալառուի աշխատակազմի խմելու և կենցաղային կարիքները հոգալու համար անհրաժեշտ ջրի ծախսի հաշվարկը ներկայացվում է ստորև.*

$$W = (n \times N + n_1 \times N_1) \times T$$

որտեղ՝

n - տեխնիկական աշխատողների և ծառայողների առավելագույն թիվն է՝ 5 մարդ

N - ջրածախսի նորման՝ 0.016 մ^3 ,

n_1 - բանվորների առավելագույն թիվն է՝ միջին 30 մարդ

N_1 - ջրածախսի նորման բանվորների համար՝ $0.025 \text{ մ}^3/\text{մարդ օր}$

T –աշխատանքային օրերի առավելագույն թիվը ամբողջ շինարարության ընթացքում՝ $22 \text{ օր} \times 35 \text{ ամիս} = 770 \text{ օր}$:

Այսպիսով՝ $W = (5 \times 0.016 + 30 \times 0.025) \times 770 = 639.1 \text{ մ}^3$ / շինարարություն ժամանակ կամ $0.830 \text{ մ}^3/\text{օրական}$:

107. Շինարարական աշխատանքներում և բանավորական կազմի խմելու-կենցաղային նպատակների համար անհրաժեշտ ջուրը կվերցրվի ԲԿ-ի տարածքին կից՝ Հերացի փողոց 21 հասցեով անցնող համայնքային ջրագծից:

108. Ներկայացվող գործունեության ընթացքում ուղղակի ազդեցություններ ջրային համակարգերի վրա չեն կանխատեսվում, քանի որ տեղամասին կից չկան ազդեցության ենթակա ջրային մարմիններ: Անուղղակի ազդեցություններ ջրային համակարգերի վրա ևս չեն կանխատեսվում, քանի որ շինարարական մեքենաների երթևեկությունը կկազմակերպվի համապատասխան չափաքանակներով և ծածկող

պաստառների առկայությամբ՝ բացառելով շին-մեքենաների երթևեկության ընթացքում հնարավոր արտանետումները:

109. Շինարարական աշխատանքների ընթացքում հոսքաջրերի առաջացում ևս չի կանխատեսվում՝ հաշվի առնելով աշխատանքների բնույթը, բացի այդ աշխատանքները կատարվելու են ցանկապատված շինհրապարակի ներսում, ինչը կբացառի և/կամ կնվազեցնի հնարավոր հոսքաջրերի արտահոսքերը և այլ արտանետումները տեղամասից:

110. Գնահատվում են կեղտաջրերի (բետոնաջուր և այլն) առաջացում, որոնց հեռացման համար հրապարակում կպահվի նախատեսված տարա, որտեղ կհեռացվեն կեղտաջրերը: Տարայում հետերոզեն զանգվածի նստեցումից հետո, վերջիններս հնարավոր կլինի շին աղբի հետ հեռացնել աղբավայր, իսկ դեկանտված ջուրը՝ օգտագործել ջրցանման նպատակով կամ շինարարական այլ աշխատանքներում:

6.1.4 Թափոնների առաջացում և կառավարում

111. Շինարարական աղբի կուտակումը կարող է հանգեցնել հողային համակարգի արտաքին շերտի աղբոտվածության: Նշված ազդեցություններից խուսափելու համար շինաղբը ժամանակավոր կուտակվելու է շինհրապարակում կազմակերպված կույտերի տեսքով՝ հատուկ հատկացված տեղերում, այնուհետև կանոնավոր կերպով (ամենաքիչն երեք օրը մեկ) տեղափոխվելու է Մասիսի համայնքապետարանի կողմից հատկացրված վայր: (Հավելված 12):

112. Շինարարական աշխատանքների ընթացքում, մասնավորապես՝ հիվանդանոցի շենքի ապամոնտաժումից և տարածքի բարեկարգման աշխատանքների ընթացքում գնահատվում են IV դասի վտանգավորությամբ թափոնների առաջացում՝ ստորև ներկայացվող տեսակային կազմով.

Թափոնի անվանումը	Ծածկագիրը
շենքերի քանդումից առաջացած շին աղբ	91200601 01 00 4
շինարարության փայտանյութի թափոններ	91200601 01 00 4
պատի բետոնե իրեր, սյուներ, փչացած և աղտոտված սալիկներ	39901200 01 00 4
ասֆալտի և ասալտբետոնի խառնուրդի մնացորդներ	31401200 01 00 4

113. Նշված թափոնների կառավարումը (բացառությամբ փայտանյութի) կիրականացվի ՀՀ կառավարության N 30 արձանագրային որոշման համաձայն, կտեղափոխվի Մասիսի համայնքապետարանի կողմից հատկացված վայր:

114. Ապամոնտաժման ընթացքում գոյացած «շինարարության փայտանյութի թափոնները» գնահատվում են երկրորդայի օգտագործման համար պիտանի: Վերջիններս կվերամշակվեն և կօգտագործվեն որպես երկրորդային հումք կապալառուի կողմից այլ շին աշխատանքներում: Այլ նյութերը (հիմնականում մետաղի ջարդոններ, դռներ, պատուհաններ, խողովակներ) կտեսակավորվեն և նույնպես կօգտագործվեն որպես երկրորդային հումք:

115. Գործունեության ընթացքում (ապամոնտաժման աշխատանքներ) կգոյանա շուրջ 3 250 տ շին աղբ:

116. Քսայուղերի և այլ հեղուկ վառելիքի թափոնների առաջացում չի կանխատեսվում: Շինաշխատանքների ավարտից հետո նշված նյութերի մնացորդները կհավաքվեն և կրկին կօգտագործվեն կապալառուի կողմից :

117. Հրապարակում կենցաղային աղբի մնացորդները կհավաքվեն աղբի համար նախատեսված տարաներում, որտեղից աղբը կանոնավոր կերպով կհեռացվի հանրային աղբամաններ:

118. Թափոնների կառավարման միջոցառումների ցանկը բերված է *Աղյուսակ 6.-ում* (6. ենթաբաժին, Թափոնների կառավարման պլան):

6.1.5 Հողային համակարգերի վրա ազդեցություն և մեղմացման միջոցառումներ

119. Ներկայացվող գործունեության ընթացքում ազդեցության ենթակա բուսահողի ծավալը գնահատվում է 2 080 խ.մ., որը նախատեսվում է հողային աշխատանքների ընթացքում հեռացնել/մերկացնել և պահել արտադրական նյութերի պահման համար հրապարակում նախատեսված վայրում՝ հետագայում այն տարածքի բարեկարգման/կանաչապատման աշխատանքներում օգտագործելու նպատակով: Լրացուցիչ բնահողի մատակարարում չի նախատեսվում:
120. Բուսահողի ժամանակավոր պահումը կիրականացվի 2 մ չգերազանցող կույտերով և պաստառներով ծածկված վիճակում՝ բացառելու համար շինգործողությունների ընթացքում բուսահողի վրա հնարավոր ազդեցությունները, ինչպես նաև կուտակված զանգվածից փոշու տարածման ռիսկերը:
121. Շինարարական աշխատանքների ընթացքում կբացառվեն տարածքում պահպանվող ծառողիների հատվածում առկա բուսահողի վրա այլ անուղղակի ազդեցությունները, ինչպիսիք են՝ շինաղբի տեղադրում կամ կեղտաջրերի հեռացում և այլն:
122. Բուսահողի պահպանման միջոցառումները առավել մանրամասն նկարագրված են բնապահպանական միջոցառումների ծրագրում *Սղյուսակ 6.-ում (տես 2. ենթաբաժին,, Բուսահողի պահպանում և կառավարում)*:
123. Հրապարակում քսայուղերը և հեղուկ վառելիքի տարաները կպահվեն հատուկ անթափանց (ավազե, մատաղական կամ բետոնե) հիմքերի վրա, ինչը կբացառի վերջիններիս արտահոսքով պայմանավորված հողային շետերի հնարավոր աղտոտման ռիսկերը:
124. Նախատեսվող գործունեության ընթացքում մեքենա-սարքավորումների լիզքավորումը, քսայուղերի փոխումը կամ նմանատիպ այլ գործողությունները հիմնականում կիրականացվեն մասնագիտացված կենտրոններում, որպեսզի

հնարավորինս բացառվի շրջակա միջավայրի վրա ազդեցությունները և հնարավոր ռիսկերը:

125. Թափոնների կառավարման միջոցառումները մանրամասն ներկայացված են *Աղյուսակ 6.-ում (5 և 6 ենթաբաժին, Թափոնների կառավարում և Արտակարգ իրավիճակների կառավարում)*:

6.1.6 Ազդեցություն բուսական աշխարհի վրա և մեղմացման միջոցառումներ

126. Նախագծված ԲԿ-ի հատակագծի և տեղամասի ներկա իրավիճակի հատակագծի համադրումը բերվում է Նկ. 4-ում: Գնահատականների համաձայն՝ հիվանդանոցի շենքի նախագծին և շին աշխատանքների կազմակերպմանը խանգարում են թվով 115 ծառեր, որոնցից 38-ը նախատեսվում է վերատնկել, իսկ աշխատանքներին խանգարող 77 ծառերը՝ կհատվեն: Բոլոր այս ծառերը գտնվում են շինություններին շատ մոտ և ժամանակի ընթացքում ձևավորված արամատային համակարգը ներառած է շենքերի հիմքերին՝ առաջացնելով շենքերի խարխլման վտանգներ:

127. Գործունեության շրջանակում բուսականությանը հասցրված բացասական ազդեցությունները և վնասները կկոմպենսացվեն տարածքում նոր և ավելի արժեքավոր բուսականությամբ համալրված կանաչապատ գոտու ստեղծմամբ (շուրջ 7502 ք.մ մակերես կամ կառուցապատվող տարածքի 31.87 %-ը): Կանաչապատման աշխատանքների շրջանակը ներկայացված է 4.2 ենթաբաժնում:

128. Շինարարության ընթացքում տարածքում առկա բուսականության պահպանության և կառավարմանն ուղղված համալիր միջոցառումների ցանկը բերվում է *Աղյուսակ 5.-ում* ներկայացված բնապահպանական միջոցառումների ծրագրում (*տես 2. ենթաբաժին, Բուսականության պահպանության և կառավարման պլան*):

6.1.7 Սոցիալական ազդեցությունները և մեղմացումը

129. Գործունեության ընթացքում հնարավոր սոցիալական ազդեցությունները մեղմացնելու նպատակով ադուկ առաջացնող գործողությունները կիրականացվեն սահմանափակ ժամերի՝ **14:00-ից 18:00:** Կվերահսկվեն շինարարական մեքենաների տեխնիկական վիճակը, որպեսզի դրանք ապահովված լինեն ադմկակլանիչներով, ժամանակին կվերացվեն սարքավորումների անսարքությունները կամ անսարք վիճակում գտնվողները կվիտարինվեն նորերով:

130. Հնարավոր սոցիալական ազդեցությունները շին-հրապարակում կբացառվեն նաև աշխատանքի և առողջության անվտանգության ապահովման միջոցառումների իրականացմամբ, որոնք մանրամասն նկարագրված են *Աղյուսակ 5.-ում (1 ենթաբաժին, Աշխատանքի և առողջության ապահովման պլան)*, մասնավորապես՝ կիրականցվի հրապարակի ցանկապատում, կողմնակի անձանց մուտքը արգելող նշանների տեղադրում, հրապարակում աշխատող բանվորական կազմին կտրամադրվեն անվտանգության միջոցներ, կապահովեն խմելու ջրի և հանգստի կազմակերպան պայմանները:

6.1.8 Երթևեկության վրա ազդեցություն և մեղմացման միջոցառումները

131. Գործունեության ընթացքում կանխատեսվում են շինարարական մեքենասարքավորումների շարժով պայմանավորված երթևեկության ծանրաբեռնվածություններ: Նշված ազդեցությունները կմեղմացվեն

շինարարական մեքենա-սարքավորումների տեղաշարժը կազմակերպելով շարասյուններով, սահմանափակ արագությամբ (≤ 30 կմ/ժ), ինչպես նաև մեքենաների իրար հաջորդող տեղաշարժը կկազմակերպվի նվազագույնը 30 րոպե ինտերվալով:

132. Հրապարակը լքելիս կիրականացվի մեքենաների անվադողների լվացման և մաքրման միջոցառումներ, որպեսզի բացառվի հանրային ճանապարհների վրա ցեխի և փոշու տարածման ռիսկերը: Նշված ազդեցությունների մեղմացմանն ուղղված միջոցառումներն առավել մանրամասն ներկայացված են *Աղյուսակ 5.-ում (4. ենթաբաժին, «Երթևեկության և մոտեցման ճանապարհների կառավարման պլան»):*

6.1.9 Աշխատանքի անվտանգություն և առողջություն

133. Գործունեությունը մեծ անդրադարձ է կատարում հանրության անվտանգության և առողջության, ինչպես նաև շինարարական կազմակերպության աշխատողների անվտանգության և առողջության ապահովման հարցերին շինհրապարակում, որի համար նախատեսված են մի շարք միջոցառումներ հնարավոր ազդեցությունները և անհարմարությունները բացառելու կամ մեղմացնելու նպատակով:
134. Շինհրապարակում առողջության և աշխատանքային անվտանգությանն ուղղված կանոնները/միջոցառումները կիրականացվեն կապալառուի կողմից՝ համաձայն ԲՄԾ-ում նկարագրված ընթացակարգի, որոնք համալիր ներկայացված են «Առողջության և աշխատանքի անվտանգության պլան», ինչպես նաև «Արտակարգ իրավիճակների արձագանքման պլան» ենթաբաժիններում (տես Աղ.5, ԲՄԾ):

6.1.10 Հնարավոր արտակարգ իրավիճակները և մեղմացման միջոցառումները

135. Շինարարական աշխատանքների ընթացքում կանխատեսվում են հետևյալ ռիսկերը.

- հրդեհի առաջացում
- հեղուկ նյութերի արտահոսք
- աշխատողների վնասվածքներ
- շահագործվող տեխնիկայի հետ վթարներ
- շենքի փլուզումներ ապամոնտաժման գործողությունների ընթացքում

136. Հնարավոր արտակարգ իրավիճակներից խուսափելու նպատակով պարբերաբար շինարարական տեղամասում կիրականացվեն հետևյալ միջոցառումները.

- Մինչ աշխատանքների սկիզբը բոլոր աշխատողները՝ այդ թվում նաև վարորդները, հրահանգավորվելու են ըստ աշխատանքի անվտանգության կանոնների, ինչը պատշաճ եղանակով գրանցվելու է անվտանգության վարման գրանցամատյանում:

- Շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հագեցվելու են հրդեհաշիջման առաջնային միջոցներով, առաջին բուժօգնության դեղատուփով, իսկ աշխատողներն անցնելու են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում/պատրաստվածություն:

- Բանվորական և ղեկավար կազմը ապահովվելու է սեզոնային արտահագուստով, անվտանգության սաղավարտով և այլ պաշտպանիչ միջոցներով:

- Հեղուկ նյութերը և քսայուղերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:

- Շինարարական մեքենաների վառելիքի լիցքավորումը և քսայուղերի հետ առնչվող բոլոր գործողությունները կիրականացվեն հատուկ մասնագիտացված կենտրոններում:

- Հնարավոր վնասվածքների, պատահարների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժօգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի համայնքի բժշկական հաստատությունը:
- Շինարարական հարթակում կապահովվի արտակարգ իրավիճակների վարման մատյան, որը շինարար կապալառուն պարտավոր կլինի պատշաճ մակարդակով վարել:
- Շինարարական հրապարակում կապահովվեն արտակարգ իրավիճակների մասին պատմող և արձագանքման քայլերը լուսաբանող պաստառներ/պլակատներ:
- Կիրականացվի մոնոլիտ տեղամասերի կառուցում և ապամոնտաժվող կոնստրուկցիաների ամրակապում, որպեսզի շին գործողությունների ընթացքում բացառվի շենքի անցանկալի փլուզումները և արտակարգ իրավիճակները:

137. Նշված միջոցառումների պատշաճ մակարդակով ապահովվման դեպքում, հնարավոր կլինի նվազագույնի հասցնել արտակարգ իրավիճակների ռիսկերը, իսկ առաջացման դեպքում հնարավոր կլինի ձեռնարկել արագ և արդյունավետ հակազդման միջոցառումներ:

6.1 Շահագործման փուլ

138. Մասիսի ԲԿ-ի շահագործման փուլում շրջակա միջավայրի վրա գնահատվում են հետևյալ ազդեցությունները.

139. Բժշկական *վտանգավոր թափոնների առաջացում*, որոնց կառավարումը ինչպես և նախկինում կիրագործվի ԲԿ-ի կողմից ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված սանիտարական կանոնների և նորմերի համաձայն, մասնավորապես՝ վտանգավոր թափոնները կհավաքվեն և կպահվեն փակ պոլիէթիլենային տոպրակներով հատուկ թափոնների համար նախատեսված սենյակներում, իսկ այնուհետև կհանձնվեն ԲԿ-ի և բժշկական թափոնների դուրս բերման/ուչնչացման ծառայությունների վճարովի ծառայությունների

իրականացման գործող պայմանագրի շրջանակում: Պայմանագիրը կներկայացվի սույն հայտին կից:

140. Ջեռուցման շրջանում գնահատվում են *կաթսայատան շահագործմամբ պայմանավորված արտանետումներ (ածխածնի և ազոտի օքսիդներ)*: Արտանետվող աղտոտիչների կոնցենտրացիաները մթնոլորտի գետնամերձ շերտում արագ ցրման հետևանքով չեն գերազանցի գործող ՍԹԿ-ները, բացի այդ ժամանակակից նոր կաթսաների տեղադրումը ևս կնպաստի ջեռուցման շրջանում արտանետումների քանակի զգալի կրճատմանը:

7. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

7.1 Բնապահպանական ազդեցությունները մեղմացնող միջոցառումները

141. Ներկայացվող գործունեության համապատասխանությունը ՀՀ օրենսդրական պահանջներին և նորմերին կապահովվի ԲԿ-ի կառուցման բոլոր փուլերի ընթացքում (նախագծում, շինարարություն և շահագործում) բնապահպանական միջոցառումների ծրագրի (ԲՄԾ) ակտիվ և արդյունավետ իրականացմամբ, որի շրջանակում նախատեսվող միջոցառումները մանրամասն ներկայացված են Աղ. 5-ում: ԲՄԾ-ի պատշաճ մակարդակով իրականացումը կկանխարգելի և/կամ կնվազեցնի գործունեության ընթացքում կանխատեսվող անցանկալի բացասական ազդեցությունները շրջակա միջավայրի վրա:

142. ԲՄԾ-ն որպես անբաժանելի մաս կցվելու է հիմնական շինարար կապալառուի մրցութային և պայմանագրային փաստաթղթերին: Հիմնական շինարար կապալառուն պատասխանատու է լինելու ԲՄԾ-ի իրականացման համար և ընտրվելու է մրցութային կարգով:

143. Ստորև ամփոփ բերվում են նախատեսվող գործունեությունից ակնկալվող բացասական ազդեցությունները մեղմացնող և/կամ բացառող *հիմնական* բնապահպանական, աշխատանքի և առողջության ապահովմանն ուղղված միջոցառումները.

- տեղեկատվության հրապարակում և հանրային լսումներ
- շինարարական հրապարակի ժամանակավոր ցանկապատում, լուսավորության ապահովում և այլն
- կիրականացվի ազդեցության ենթակա բուսահողի մերկացում/հեռացում և ժամանակավոր պահպանում հետագայում օգտագործման նպատակով
- շինարարական աղբի կանոնավոր հեռացում և պահում համայնքապետարանի տրամադրած տեղեկանքի համաձայն

- հրապարակում կտեղադրվեն կենցաղային թափոնների համար նախատեսված տարաներ և այնուհետև աղբը կհեռացվի հասարակական աղբաման
- շինարարական հրապարակի ջրցանում և փոշու արտանետումների մակարդակների կառավարում ՀՀ թույլատրելի նորմերի սահմանում, ինչպես նաև կիրականացվեն մեքենաների անիվների լվացման/մաքման միջոցառումներ
- շինարարական մեքենաների տեղաշարժը կիրականացվի սահմանափակ՝ 30 կմ/ժ չգերազանցող արագությամբ, իսկ բեռնատարերի դեպքում՝ թափքի ծածկի առկայությամբ
- աղմուկ առաջացնող աշխատանքներն կիրականացվեն թույլատրելի մակարդակների սահմանում և օրվա ցերեկային ժամերին՝ **14.00-18:00**
- շինարարական նյութերի ձեռք բերումը կիրականացվի լիցենզավորված մատակարարից
- վառելիքի և նավթանման նյութերի պահումը կիրականացվի բետոնե/ մետաղական կամ ավազե հիմքերի վրա
- արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումների ընթացակարգերը և կոնտակտային տվյալները պաստառների ձևով կփակցրվեն հրապարակում
- կիրականացվեն աշխատանքի և առողջության անվտանգության ապահովման միջոցառումները, ներառյալ՝ բանվորական կազմը կապահովվի սեզոնային արտահագուստով և անվտանգության սաղավարտներով, դիմակներով և այլն
- կիրականացվի ապամոնտաժվող շենքի ամրակալում՝ բացառելու համար շենքի փլուզման հետ կապված ռիսկերը
- մեքենաների վառելիքի լիցքավորումը, քսայուղերի փոխարինումը կկազմակերպվի շինհրապարակից դուրս և մասնագիտացված կենտրոններում
- տարածքում կիրականացվեն հետշինարարական բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ:

144. Ենթաձրագրի շրջանակում իրականացվող հիմնական բնապահպանական միջոցառումների գումարային արժեքը (առանց հարկերի) հաշվարկվում է **4 653.16**

հազ. ՀՀ դրամ (*Աղյուսակ 5*): Նշված արժեքը ներառում է նախագծման փուլում՝ տեղեկատվության հրապարակման և հանրային ծանուցման, բնապահպանական փորձաքննության համար նախատեսվող ծախսերը, շինարարության փուլում՝ շինարարական աղբի հեռացման և կանաչապատման աշխատանքները: Նշված միջոցառումների ծախսերը հաշվի են առնված նախագծի ծավալաթերթերում: ԲՄԾ-ում ներկայացված մնացած միջոցառումները շինարար կապալառուն կիրականացնի ենթածրագրի շրջանակում նախատեսվող օժանդակ ծախսերի գումարից:

Աղ.4 Մեղմացնող միջոցառումների ուղիղ (հարկերը հաշվի չեն առնված) արժեքները:

Մեղմացնող միջոցառումը	Միավորը	Ծավալը/ Ցուցանիշը	Գումարային արժեքը, հազ. ՀՀ դրամ	Ժամանակացույցը
հանրային ծանուցում	հատ	2	10	նախագծման փուլ
բնապահպանական փորձաքննություն	-	-	15	նախագծման փուլ
շին աղբի տեղափոխում	տ	3 250	3 328.0	շինարարության փուլ
սիզամարգերի ստեղծում (ներառյալ ցանման աշխատանքներ)	ք.մ	2 333	662.48	կանաչապատում
ծառատունկ (ներառյալ փոսերի մշակում և տնկում)	հատ	171	29.07	կանաչապատում
թփերի (ներառյալ տնկման աշխատանքներ)	հատ	53	128.79	կանաչապատում
թփերով ճեմապատում (ներառյալ տնկման աշխատանքներ)	գ. մ	270	463.86	կանաչապատում
ծառերի վերատնկում (ներառյալ տեղահանում և տեղափոխում)	հատ	38	15.96	կանաչապատում
Ընդամենը՝ հազ. ՀՀ դրամ				4 653.16

7.2 Մոնիտորինգ

145. Ծրագրի պատվիրատուն կանոնավոր մոնիտորինգ է իրականացնելու, որպեսզի վերահսկի ԲՄԾ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարումը և դրանց արդյունավետությունը: Մշակված մոնիտորինգի պլանը ներկայացվում է *Հավելված 13*-ում:

146. Միջոցառումների իրականացման ամենօրյա վերահսկողությունը կիրականացվի տեխնիկական վերահսկման խորհրդատուի կողմից: Տեխնիկական վերահսկողները հսկելու են նաև բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության հարցերը և ժամանակին տեղեկացնելու են ՔԿ-ին նկատված անհամապատասխանությունների մասին:

Աղ. 5 Բնապահպանական միջոցառումների ծրագիր

Մեղմացնող միջոցառումներ			
Ծրագրի գործողություններ	Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություններ	Առաջարկվող մեղմացնող միջոցառումներ	Պատասխանատու մարմին
ՆԱԽԱԳԾՄԱՆ ՓՈՒԼ			
1. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում և փորձաքննություն	Գործունեությունը կարող է ունենալ բացասական ազդեցություն շրջակա միջավայրի վրա և ըստ ՀՀ ՇՄԱԳ օրենքի պահանջում է բնապահպանական պետական փորձաքննություն իրականացում և դրական եղրակացության ձեռք բերում:	Մշակել նախագծվող ԲԿ-ի կառուցման գործունեության ընթացքում շրջակա միջավայրի վրա կանխատեսվող ազդեցության նախնական գնահատման հայտը և դիմել ՀՀ ՇՄՆ պետական փորձաքննության, ձեռք բերել փորձաքննական եզրակացություն:	«ՆՈՐԱՇԵՆ» ՆՏ ԱԿ
2. Հանրային լսումներ և հանրության իրազեկում	Հանրության ոչ պատշաճ տեղեկացվածությունը և հնարավոր բողոքները կարող են ազդել ԲԿ-ի կառուցման գործունեության ժամկետների վրա:	<ul style="list-style-type: none"> - Նախագծվող ԲԿ-ի և կառուցման գործունեության վերաբերյալ առաջին հանրային քննարկումն իրականացվել է Մասիսի համայնքապետարանի վարչական շենքում սույն թվականի փետրվարի 19-ին, ժամը 14:00-ին: Հանրային քննարկման մասին հայտարարությունը տպագրվել է «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի 05/02/2020 համարում: - Երկրորդ հանրային քննարկումը տեղի կունենա ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից իրականացվող պետական փորձաքննության շրջանակում: 	«ՆՈՐԱՇԵՆ» ՆՏ ԱԿ
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՒԼ (ԱՊԱՍՈՆՏՄԵՆՏՈՒՄ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ)			
1. Առողջության և աշխատանքային անվտանգության պլան			
3. Շինարարական հրապարակի բոլոր գործողությունները	ԲԿ-ի կառուցման գործընթացի բնապահպանական պահանջների մասին տեղեկատվության պակասը կարող է	<ul style="list-style-type: none"> - Անհրաժեշտ է նշանակել բնապահպանական/ աշխատանքային անվտանգության և արտակարգ իրավիճակների համար 	Կապալառու

	<p>հանգեցնել շրջակա միջավայրի վատթարացման:</p> <p>Շին առարկաների ոչ ճիշտ դասավորվածությունը և շինհրապարակի ոչ ճիշտ կազմակերպումը կարող են առաջացնել աշխատանքի և առողջության անվտանգության խնդիրներ:</p>	<p>պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շինհրապարակում:</p> <ul style="list-style-type: none"> - Անհրաժեշտ է ձեռնարկել միջոցառումներ կողմնակի անձանց մուտքը շինհրապարակ արգելելու համար, մասնավորապես տարածքի ցանկապատում, ստեղծել պահակակետեր, տեղադրել ցուցանակներ, արգելող պատաստներ այլ: - Անհրաժեշտ է ապահովել կրակմարիչի առկայությունը և հեշտ հասանելիությունը շինհրապարակի բոլոր մեքենաներում և հատվածներում: - Անհրաժեշտ է ապահովել առաջին բուժ օգնության դեղատուփի առկայությունը և հեշտ հասանելիությունը շինհրապարակում: - Բանվորական և այլ անձնակազմը պետք է ապահովվի սեզոնային արտահագուստով և այլ անձնական պաշտպանիչ միջոցներով (անվտանգության սաղավարտ, շնչառական դիմակ, պաշտպանիչ ակնոց և ականջակալ, և այլն): - Աշխատանքային անվտանգության և առողջության հետ կապված միջադեպերը պետք է գրանցել և հաշվետվության ձևով ներկայացնել ՔԿ-ին: - Աշխատողներին անհրաժեշտ է տրամադրել կոնկրետ աշխատանքի անվտանգության հրահանգավորում՝ աշխատանքը սկսելուց առաջ: Հրահանգավորման իրադարձությունը պատշաճ պետք է գրանցել անվտանգության գրանցամատյանում: - Անհրաժեշտ է ապամենտաժման գործողություններում ապահովել 	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>
--	----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------	----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------	-------------------------------------------------------------------------------------------------------

		<p>փուլվող շենքի/կոնստրուկցիաների ամրակալման աշխատանքները:</p> <ul style="list-style-type: none"> - Խստագույնս պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը: 	Կապալառու
2. Շրջակա միջավայրի պահպանության պլան			
<p>5. Շինարարական հրապարակի բոլոր գործողությունները. պամոնտաժման և կառուցման աշխատանքներ, շինանյութերի և շինադրքի փոխադրումներ, և այլն:</p>	<ul style="list-style-type: none"> - Փոշու և այլ ծխագազերի արտանետումներ՝ տրանսպորտային միջոցների երթևեկությունից, ինչպես նաև շին գործողությունների և տեխնիկայի շահագործման որոշումներով: 	<ul style="list-style-type: none"> • Մթնոլորտային օդի աղտոտման և փոշու կառավարում - Անհրաժեշտ է իրականացնել շինարարական աշխատանքների հատվածների մակերևույթների կանոնավոր ջրցանման և փոշենստեցման միջոցառումներ: - Անհրաժեշտ է նվազագույնի հասցնել շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը և պահել պաստառներով ծածկված վիճակում փոշու հնարավոր տարածումը բացառելու համար: - Անհրաժեշտ է բեռնատարերի երթևեկությունը կազմակերպել թափքի ծածկի գործածությամբ: - Անհրաժեշտ է պարբերաբար ստուգել մեքենա-սարքավորումների տեխնիկական վիճակը և անսարքության դեպքում փոխարինել պատշաճ վիճակում գտնվող մեքենա-սարքավորումներով: - Նախքան շինհրապարակից հեռանալն անհրաժեշտ է ապահովել անվադողերը մաքրելու միջոցներով (աշխատանքային տեղամասում կույզային մակերևույթների և անվադողերի լվացման միջոցներ համապատասխան արտահոսքը կանխարգելման համակարգով) շինարարական փոշու ու ցեխի տարածումը կանխելու համար: 	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>

	<p>– Աղմուկի և թրթռումների մակարդակի աճ շին աշխատանքների ընթացում:</p>	<ul style="list-style-type: none"> • Աղմուկի և թրթռումների կառավարում <ul style="list-style-type: none"> – Շին հրապարակում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին և մակարդակներին: – Անհրաժեշտ է խուսափել շինարարական գործողությունների ընթացքում մեքենաների և սարքավորումների կայանելուց զգայուն ազդակալիչների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը: – Աղմուկ առաջացնող գործողություններն անհրաժեշտ է հնարավորինս իրականացնել կեսօրվա ժամերին՝ 14:00-18:00: – Բոլոր մեքենա-սարքավորումները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով: – Անհրաժեշտ է բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը, իսկ մեքենաների կամ խլացուցիչների անսարքիության դեպքում տվյալ մեքենան անհրաժեշտ է դուրս բերել շինհրապարակից: – Անհրաժեշտ է խուսափել թրթռումներ առաջացնող աշխատանքներ կատարելուց, նման աշխատանքների անհրաժեշտության դեպքում խստորեն իրականացնել ցերեկային ժամերին և ՀՀ թույլատրելի նորմերի մակարդակներում: – Անհրաժեշտ է ապահովել բոլոր բանվորներին համապատասխան ԱՊՄ-րով, այդ թվում՝ ականջակալներով: 	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>
--	------------------------------------------------------------------------	--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------	-------------------------------------------------------------------------------------------------------

	<p>– Տարածքում աճող բուսականության վրա ազդեցություն:</p>	<ul style="list-style-type: none"> • Բուսականության պահպանում և կառավարում <ul style="list-style-type: none"> – Անհրաժեշտ է տարածքում առկա բուսականությունը պաշտպանել շին գործողություններից, թափոնների տեղադրումից, փոշու ազդեցությունից և հնարավոր այլ ազդեցություններից: – Հստ անհրաժեշտության իրականացնել ազդեցության ենթարկվող բուսականության պաստառապատում, ջրցանում՝ փոշու ազդեցությունները նվազեցնելու նպատակով: – Անհրաժեշտ է ապահովել տարածքում բուսականության ռոռզման միջոցառումները շին աշխատանքների ընթացքում: – Անհրաժեշտ է իրականացնել միայն ԲԿ-ի նախագծով ազդեցության ենթակա ծառերի հեռացման և վերատնկման գործողությունները և խուսափել տարածքում պահպանվող որևէ ծառի և թփերի հատումից՝ խստորեն հետևելով մշակված կանաչապատման/բարեկարգման աշխատանքների նախագծին: Նշված աշխատանքները համաձայնել Մասիս համայնքապետարանի հետ: – Անհրաժեշտ է հրապարակում պահել կեղտաջրերի հեռացման համար նախատեսված տարա, հետերոգեն զանգվածի նստեցումից հետո, վերջիններս շին աղբի հետ հեռացնել աղբավայր, իսկ դեկանտված ջուրը օգտագործել ջրցանման նպատակով կամ շինարարական այլ աշխատանքներում: 	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու/ԲԿ-ի տնօրինություն</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>
--	----------------------------------------------------------	-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------	---------------------------------------------------------------------------------------------------------

	<p>Տարածքում առկա բուսահողի վրա ազդեցություն:</p>	<ul style="list-style-type: none"> • Բուսահողի պահպանում և կառավարում - Մերկացնել և առանձնացել ազդեցության ենթակա բուսահողը: Պահել այն շմ-ը չզերագանցող կույտերի տեսքով՝ հետևելով հրապարակի կազմակերպման պլանին: - Բուսահողը պահել պատտառներով ծածկված վիճակում և հետագայում օգտագործել այն ԲԿ-ի տեղամասի կանաչապատման/բարեկարգման աշխատանքների շրջանակում: - Շինաշխատանքների ընթացքում հնարավորինս բացառել տարածքում առկա բուսահողի, ներառյալ՝ պահպանվող ծառերի հատվածում առկա բուսահողի վրա ազդեցությունները (շինթափոստների և կեղտաջրերի տարածում): 	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>
<p>3. Շինարարական հրապարակի կազմակերպման պլան</p>			
<p>7. Շին հրապարակի կազմակերպում:</p>	<p>Շինհրապարակի ոչ ճիշտ կազմակերպումից բխող ազդեցություններ, ազդակիր կառույցների և սպասարկվող անձնակազմի վրա:</p>	<ul style="list-style-type: none"> - Շին հրապարակը անհրաժեշտ է կազմակերպել բացառապես ԲԿ-ի տարածքի ներսում՝ բացառելով այլ ազակակիր տարածքների օգտագործումը առանց համապատասխան թույլտվության: - Անհրաժեշտ է կազմակերպել շին հրապարակը հրապարակի կազմակերպման պլան/սխեմային համաձայն՝ սպահովելով նախատեսվող մուտքերը և ելքը: - Անհրաժեշտ է իրականացնել ժամանակավոր անթափանց ցանկապատում ողջ շին-հրապարակի/կառուցապատման տարածքի պարագծով: - Անհրաժեշտ է իրականացնել շինհրապարակի ծրագրի ցուցանակի ու մուտքն արգելող նշանների տեղադրում: 	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>

		<ul style="list-style-type: none"> - Շինհրապարակի տարածքը պետք է պահել մաքուր և կարգավորված, իրականացնել շինհրապարակի և մոտեցնող ճանապարհների ամենօրյա մաքրում՝ ցեխի և փոշու տարածումը կանխելու նպատակով: 	Կապալառու
4. Երթևեկության և մոտեցման ճանապարհների կառավարման պլան			
<p>8. Շինհրապարակ մուտք և ելք գործող մեքենաներ</p>	<ul style="list-style-type: none"> - երթևեկության ծանրաբեռնվածություն - երթևեկության հետ կապված վտանգներ և անվտանգության խնդիրներ - փոշու, աղմուկի և թրթռումների մակարդակի աճ - հասարակական ճանապարհների վրա ցեխի և շին աղբի տարածում - շինարարական ծանր սարքավորումների և փոխադրամիջոցների կողմից ճանապարհների վնասի պատճառում 	<ul style="list-style-type: none"> - Մեքենաների և բեռնատարների երթևեկությունն անհրաժեշտ է կազմակերպել հասարակական երթևեկությանը և հիմնական հանրային ճանապարհներին նվազագույն անհարմարություններ և վնաս պատճառելու սկզբունքով: - Մեքենաների և բեռնատարների երթևեկությունը և մոտեցումն անհրաժեշտ է կազմակերպել բացառապես շին հրապարակ մուտքի և ելքի համար նախատեսված ճանապարհով: - Անհրաժեշտ է խուսափել գործողություններից, որոնք կարող են ճանապարհների խցանումների/ծանրաբեռնվածության պատճառ դառնալ: - Անհրաժեշտ է ապահովել բեռնատարների ծածկով երթևեկումը շինհրապարակը լքելիս: - Անհրաժեշտ է ապահովել, որպեսզի փոխադրամիջոցները սարքավորված լինեն աղմուկի արդյունավետ կլանիչներով և խլացուցիչներով: - Անհրաժեշտ է իրականացնել փոխադրամիջոցների տեխնիկական վիճակի կանոնավոր զննում՝ վառելանյութի և յուղի հոսքը կանխելու համար: - Անհրաժեշտ է դադարեցնել արտահոսքեր ունեցող մեքենաների աշխատանքը և փոխարինել պատշաճ վիճակի մեքենաներով: - Նախքան շինհրապարակից հեռանալն անհրաժեշտ է ապահովել անվադողերը մաքրելու միջոցներով 	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>

		(աշխատանքային տեղամասում կոպչային մակերևույթների և անվադողերի լվացման միջոցներ համապատասխան արտահոսքը կանխարգելման համակարգով) շինարարական փոշու ու ցեխի տարածումը կանխելու համար:	
5. Արտակարգ իրավիճակների արձագանքման պլան			
9. Վտանգավոր նյութերի օգտագործում և այլ արտակարգ իրավիճակներ, դժբախտ պատահարներ և այլն	- Վտելիքի, յուղի կամ այլ թունավոր նյութերի արտահոսքի պատճառով հնարավոր է վտանգավոր նյութերի թափանցում հողի մեջ:	<ul style="list-style-type: none"> - Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին հրապարակում: - Անհրաժեշտ է մշակել և իրականացնել վտանգավոր նյութերի հետ անվտանգ կերպով վարվելու և պահեստավորելու ընթացակարգերը: - Անհրաժեշտ է իրականացնել նյութերի անվտանգության տվյալների թերթիկների, արտակարգ իրավիճակների արձագանքման քայլերի մասին տեղեկացնող պաստառների/պլակատների տեղադրում: - Արտահոսքը մաքրող գործիքները պետք է ճիշտ ձևով պահեստավորել, որպեսզի անհրաժեշտության դեպքում դրանք հեշտությամբ օգտագործվեն, ինչպես նաև աշխատող անձնակազմը պետք է տեղեկացված լինի դրանց ճիշտ գործածության մասին: - Արտահոսքերի դեպքում, անմիջապես կլանիչ նյութով պետք է մաքրել առաջացած հետքերը հողի հնարավոր աղտոտումը կանխելու համար: - Վտանգավոր նյութերի կառավարումը պետք է իրականացնել ՀՀ օրենսդրական պահանջներին համապատասխան: 	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>

		<ul style="list-style-type: none"> - Քիմիական և այլ, վտանգավոր նյութերն ու վառելանյութն պետք է օգտագործել միայն անհրաժեշտության դեպքում: Դրանք անհրաժեշտ է պահել ծածկված, ապահով և բնական ճանապարհով օդափոխվող տարածքում, որն ապահովված է անանցանելի/անթափանց հատակով (ավազե, մետաղական կամ բետոնե հիմքեր) և պատնեշով: - Շինարարական բոլոր տեղամասերում անհրաժեշտ է ապահովել արտակարգ պատահարների դեպքում կոնտակտային տվյալները, պատասխանատու անձանց և անվտանգության պատասխանատուի անուն(ները), հեռախոսահամարները պարունակող պատասխանների առկայությունը: - Արտակարգ պատահարի դեպքում անմիջապես անհրաժեշտ է տեղեկացնել ՔԳ-ին բանավոր, իսկ հաջորդող 24-ժամվա ընթացքում՝ գրավոր հաշվետվության ձևով: 	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>
6. Թափոնների և նյութերի կառավարման պլան			
<p>10. Շինարարական և շինարարական աշխատանքներ</p>	<ul style="list-style-type: none"> - Շին աղբի տեղադրումը անհամապատասխան վայրերում, ջրահեռացման համակարգ, բուսահող ներթափանցող թափոնները և աղտոտիչները և շինարարական այն նյութերը, որոնք պոտենցիալ վտանգ են ներկայացնում շրջակա միջավայրին: 	<ul style="list-style-type: none"> - Անհրաժեշտ է շինարարական աղբը հեռացնել բացառապես տեղական իշխանության կողմից թույլատրված վայրում, այն է 13 կմ հեռավորության վրա գտնվող Մասիսի համայնքային աղբավայր: - Շինարարական աղբը և ավելորդ գրունտը օգտագործել համայնքային աղբավայրում աղբի մեկուսացման համար: - Կանոնավոր կերպով (ամենաուշը 2 օրը մեկ) շինարարականից անհրաժեշտ է հեռացնել շինարարական թափոններն ու աղբը 	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>

		<p>փոշին և շին աղբի երկարատև կուտակումը և երթևեկության խոչընդոտները կանխելու համար:</p> <ul style="list-style-type: none"> - Անհրաժեշտ է դասակարգել աղտոտված հողը, աղբն ու շինարարական մյուս թափոններն ըստ տեսակների՝ պինդ, հեղուկ և վտանգավոր դրանց առաջացման դեպքում: - Աղտոտված հողի առաջացման դեպքում, անհրաժեշտ է այն մեկուսացնել և տեղադրել աղբի համար թույլատրված վայրերում: - Շին հրապարակի տարածքի սահմաններում անհրաժեշտ է հատկացնել շին աղբի նախնական կուտակման վայր՝ հետևելով հրապարակի կազմակերպման սխեմային: - Հրապարակում նախատեսել կենցաղային աղբի մնացորդների հավաքման աղբաման, իսկ այնուհետև հավաքված աղբը հեռացնել հասարակական աղբաման: - Անհրաժեշտ է բացառել շինանյութերի և աղբի կուտակումը շիհրապարակից դուրս՝ մասնավոր կամ հասարակական տարածքում, ինչպես նաև տարածքին կից տեղադրված հասարակական աղբամանների օգտագործումը՝ շին թափոնների հեռացման նպատակով: - Անհրաժեշտ է հրապարակում պահել կեղտաջրերի (բետոնաջուր, և այլն) հեռացման համար նախատեսված տարա, որտեղ նստվածքի մեխանիկական նստեցումից հետո ջուրը կարելի կլինի օգտագործել ջրցանման նպատակով կամ ջրի գոլորշացումից հետո նստվածքը/չոր մնացորդը հեռացնել աղբավայր: - Հեղուկ վառելիքի կամ յուղանման նյութերի տարաները անհրաժեշտ է 	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>
--	--	--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------	------------------------------------------------------------------------------------------------------------------------

		պահել անթափանց հիմքերի (բետոնե, մետաղական) կամ ավագե հիմքի վրա հողային շերտի վրա հնարավոր արտահոսքերը/ներծծումները կառավարելու նպատակով:	
7. Աշխատանքային տեղամասի վերականգնման և բարեկարգման պլան			
11. Շինհրապարակի վերականգնումը, ԲԿ-ի տարածքի բարեկարգում/կանաչապատում	- Անհրաժեշտ է շինհրապարակից հեռացնել շինարարական նյութերը թափոնները և շին պարագաները:	- Շինհրապարակից անհրաժեշտ է հեռացնել շինարարության հետ կապված բոլոր պարագաները, այդ թվում՝ չօգտագործված նյութերը, թափոնները, մեքենաները, սարքավորումները, ցանկապատումը և այլն: - Անհրաժեշտ է վերականգնել բոլոր վնասված կամ տեղահանված կոմունիկացիաները: - Անհրաժեշտ է մաքրել շինհրապարակը կենցաղային և այլ աղբից և հեռացնել յուղի, վառելիքի արտահոսքի հետքերը՝ առաջացման դեպքում: - Անհրաժեշտ է իրականացնել ՔԿ-ի կողմից մշակված ընդունման-հանձնման ակտի ստուգաթերթիկի բոլոր պահանջները: - Անհրաժեշտ է կատարել բարեկարգման աշխատանքները համաձայն նախագծի բարեկարգման և կանաչապատման պլանի համաձայն:	Կապալառու Կապալառու Կապալառու Կապալառու Կապալառու
ՀԵՏ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՓՈԻՒ			
12. Թերությունների վերացման աշխատանքներ	Շինարարական փուլի համար սահմանված բոլոր ազդեցությունները	- Անհրաժեշտ է ապահովել տնկված կանաչ գանգվածի 90% կաշտողականությունը և աճը : Հակառակ դեպքում անհրաժեշտ է փոխարինել բոլոր վնասված կամ անառողջ բուսատեսակները նորերով:	Կապալառու, ԲԿ-ի տնօրինություն
13. Բուսականության վերականգնում	Բուսականությունը չի աճում սպասվածին համաձայն	- Անհրաժեշտ է ներառել ԲԿ-ի համար նախատեսված բուսականությունը ԲԿ-ի կանաչապատ տարածքների սպասարկման պլանում:	ԲԿ-ի տնօրինություն, Կապալառու


		- Անհրաժեշտ է իրականացնել կանաչապատված տարածքի աճի և վիճակի մշտադիտարկումներ՝ մեկ տարվա կտրվածքով:	
--	--	----------------------------------------------------------------------------------------------------	--

8. ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

147. Ներկայացվող գործունեության վերաբերյալ առաջին հանրային քննարկումն իրականացվել է ս.թ. փետրվարի 19-ին՝ ժամը 14:00-ին, ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքապետարանի վարչական շենքում՝ Կենտրոնական հրապարակ, թիվ 4 շենք հասցեում: Հանրային քննարկման մասին հայտարարությունը տպագրվել է «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի 2020թ.-ի փետրվարի 06-ի համարում հանրային ծանուցման գործող ընթացակարգին համաձայն, այն է՝ քննարկումն անցկացնելու օրվանից առնվազն 7 աշխատանքային օր առաջ:

148. Հանրային քննարկման մասին հայտարարությունը և նախագծային փաստաթղթերը տեղադրվել են Մասիսի համայնքապետարանի պաշտոնական կայքում, ինչպես նաև քննարկման մասին հայտարարությունը փակցրվել է համայնքապետարանի և բժշկական կենտրոնի տեղեկատվական տախտակների վրա:

Նկ.4 Հանրային քննարկման մասին հայտարարությանը «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում, տպագրված թիվ 19 (7231) համարում (06.02.2020):



149. Հանրային քննարկմանը (Նկ.5) ներկա են գտնվել բոլոր շահագրգիռ և ազդակակիր կողմերը, ներառյալ ներկայացուցիչներ նախագծային ընկերությունից, Արարատի մարզպետարանից, Մասիսի համայնքապետարանից և ՀՀ քաղաքաշինության կոմիտեից, ԲԿ-ի աշխատակիցներ և այլ մասնակիցներ:

Նկ.5 Հանրային քննարկում, «Արարատի մարզի Մասիս համայնք, 19 փետրվար 2020 թվական:



150. Քննարկմանը ներկա մասնակիցների ցանկը (28 մարդ) ներկայացվում է *Հավելված 14.-ում*, իսկ քննարկման արձանագրությունը և տեսաձայնագրությունը կներկայացվեն փորձաքննության ներկայացվող սույն հայտին կից:

9. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Շինարարական Կլիմայաբանություն 2011: ՀՀՇՆ II 7.01-2011 ՀՀ քաղաքաշինության նախարարի 2011թ. սեպտեմբերի 26-ի N167-Ն հրաման:
2. Временное методическое пособие по расчету выбросов от неорганизованных источников в промышленности строительных материалов, МИНПРОМСТРОЙ СССР1984, Москва.
3. ԱԴԲ 2015: Բնապահպանական գնահատման և ուսումնասիրության շրջանակ:
4. ՀՀ 2011թ.-ի մարդահամարի ցուցանիշները: ՀՀ Լոռու մարզի ցուցանիշները: URL: <http://armstat.am/am/?nid=509>
5. ՀՀ կառավարության որոշում N160-Ն, 2 փետրվար, 2016թ: Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիանների-ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին:

10. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1. Ճարտարապետահատակագծային առաջադրանք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏԵՐԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԴՄԻՆԻՍՏՐԱԿՑԻՆ № 08 _____ « 12 » « 02 » 2020 Վ.		Ձև № 1-2
Օրինակ	«Կենտրոն բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի ծանցարկի ձևաթուղթ	
Այլաբանություն	Խնայողական ժամանակների ձևաթուղթ	
Քաղաքի անունը	Երևան	
Կառուցաբերող	«ՀՀ ԲՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ»	
Առաջադրանքի տրամադրման հիմքը	Պայմանագրային կապերի մասին օրենքի հիմամբ	
Առաջադրանքի ստորագրողի անունը	Վահագն ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԴՄԻՆԻՍՏՐԱԿՑԻՆ	
ԿԱՍՏՐՈՒՄԱՆ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ		
1. Օրինակի քանակը	Կաստրոնի քանակը	
2. Օրինակի բաժնիք	4 87 հա	
3. Օրինակի տեսք (թիվ)	Պայմանագրային կապերի մասին օրենքի հիմամբ	
4. (*) Ծրագրավորման պայմանները	Մտային	
5. (*) Ծրագրավորման ցուցիչի և ստեղծվող օբյեկտի անունագրում և/կամ օբյեկտի անունագրում և/կամ օբյեկտի անունագրում (կենտրոնական կառուցվածքի անունը)	Կենտրոն բժշկական կենտրոն	
6. (*) Կոդի հոդանունը	Վճարային կապերի մասին օրենքի հիմամբ	
7. Ռեզյումե հատուկ պահանջներ և (կամ) պատճառներ և/կամ օբյեկտների տարածքներ ընտրելու համար	Ոչ	
8. Կաստրոնի արժեքային քանակը	Վճարային կապերի մասին օրենքի հիմամբ	
ԿԱՍՏՐՈՒՄԱՆ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ		
9. Կաստրոնի արժեքային քանակը	Վճարային կապերի մասին օրենքի հիմամբ	
10. Կաստրոնի արժեքային քանակը	Վճարային կապերի մասին օրենքի հիմամբ	
11. Կաստրոնի արժեքային քանակը	Վճարային կապերի մասին օրենքի հիմամբ	
12. 1. (*) Կաստրոնի արժեքային քանակը	Վճարային կապերի մասին օրենքի հիմամբ	
12. 2. (*) Կաստրոնի արժեքային քանակը	Վճարային կապերի մասին օրենքի հիմամբ	


12.3 Ի՞նչպես կազմակերպվում է	կզբով է _____ ստեղծ	25. Կանխաշեղջյրի կամ ժամանակահատվածի նշանակումը (կիրառելի) սահմանում	_____
12.4 Ի՞նչպես կազմակերպվում է կազմակերպության կազմակերպումը (օրինակ՝ գիտատեղի) ստեղծելիս	կզբով է _____ ստեղծ	26. Փաստաթղթի բախտերից ուղիղ սահմանում	_____
12.5 Կա՞նխաշեղջյր	_____	27. Կա՞նխաշեղջյր	_____
12.6 Կա՞նխաշեղջյր	_____		
13. Ծառայողի իրենցիպան կախարհաբանություն	_____		
14. Ընդհանրացում	_____		
15. Ընդհանրացում կառուց	_____		
16. Գաղափարական կառուցներ	_____		
17. Կախարհաբան սահմաններ	_____		
18. Կախարհաբանների ընտրության անհատական կարգի սահմանում (օրինակ՝ ընտրություն)	_____		
19. Ընտրության մեթոդների անհատական	_____		
20. Ընտրության կարգադրություն	_____		
21. Առաջադրանքի կառուցման համարը և կառուցման մեթոդը	_____		
22. Կախարհաբան փաստաթղթի կառուցման համարը (օրինակ՝ կառուցում)	_____		
23. Կախարհաբան կառուցում	_____		
24. Կախարհաբան ընտրություն	_____		

 <p>ՀԱՅԱՍՏԱՆԻ ԸՆԴՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿՆԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏԵՐՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿՆԵՐՈՒԹՅԱՆ ԳՆԱԿԱԿԱՆ ԳԱՆՏՐՈՒՄ</p>	<p>ԳՆԱԿԱԿԱՆ ԳԱՆՏՐՈՒՄ</p> <p>ԳՆԱԿԱԿԱՆ ԳԱՆՏՐՈՒՄ</p>
-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------	---------------------------------------------------

Հավելված 8. Շինարարական հրապարակի կազմակերպման և ապամոնտաժման աշխատանքների պլան



Հավելված 9. Ապամոնտաժման աշխատանքների հաջորդականությունը և ժամանակացույցը



Հավելված 11. Անշարժ գույքի սեփականության վկայական (ներդիր)

Համար՝ 005

Քանոնադրություն 2007 թվականի
հունիսի 27-ի N 111-Ն հրամանով

Իրավունքների ամբողջական ցուցակի մասին

Վերջինը՝ 026 045244

Օբյեկտը՝ «ՄԱՍԻՍԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՓԵՆ ԻՆՎԵՍՏԻՄԵՆՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Պատկերային մասին՝

Այս փաստաթուղթը ձևավորվել է հիմնարկի հիմնադրման փուլում՝
2007 թվականի մարտի 9-ին հիմնարկի
անհատական ընկերության հիմնադրման
ակտի հիման վրա՝ հիմնարկի հիմնադրման
փուլում՝ 2007 թվականի հունիսի 27-ին

Ներդրողի անունը՝

Պատկերային մասին՝

26 03 20



Համար՝ 004

Քանոնադրություն 2007 թվականի
հունիսի 27-ի N 111-Ն հրամանով

Իրավունքների ամբողջական ցուցակի մասին

Վերջինը՝ 026 045244

Օբյեկտը՝ «ՄԱՍԻՍԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՓԵՆ ԻՆՎԵՍՏԻՄԵՆՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Պատկերային մասին՝

Այս փաստաթուղթը ձևավորվել է հիմնարկի հիմնադրման փուլում՝
2007 թվականի մարտի 9-ին հիմնարկի
անհատական ընկերության հիմնադրման
ակտի հիման վրա՝ հիմնարկի հիմնադրման
փուլում՝ 2007 թվականի հունիսի 27-ին

Ներդրողի անունը՝

Պատկերային մասին՝

ԸՆ ԳՆԱՄ ԲԵՐԻ



Հավելված 13. Բնապահպանական մեղմացնող միջոցառումների մոնիտորինգի պլան

Մոնիտորինգ						
Վայրը/ Փուլը	Գործողությունը/ Ենթակա պարամետրեր	Մոնիտորինգի կետեր	Մոնիտորինգի գործիքներ/ մեթոդներ	Բնապահպանական գործողությունների ցուցանիշ	Պատասխանատուներ	Մոնիտորինգի հաճախականություն
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՒԼ						
1. Աշխատանք ունենալու հնարավորություններ	Աշխատուժը համալրված է տեղացի բնակիչներից, կանանցից և ցածր որակավորում ունեցող աշխատողներից	Շինարարական տեղամաս	Փաստաթղթերի ստուգում այդ թվում կապալառուի կողմից աշխատատեղեր, նախատեսված են տեղաբնակ աշխատողների, ցածր որակավորում ունեցողների և կանանց համար	Կապալառուի կողմից աշխատանքի ընդունված տեղաբնակ աշխատողների, ցածր որակավորում ունեցողների և կանանց թիվը	ՔԿ ՎԽ	Կսահմանվի Կապալառուի կողմից աշխատուժի համալրման պլանի մեջ դիտարկել շինարարական գործողությունների մոբիլիզացիոն փուլում
2. Հանրային լտումներ և կապը հանրության հետ	Հանրության տեղեկացվածությունը շինարարության փուլերի վերաբերյալ Ազգակիր կողմերի տեղեկացվածություն Ծրագրի վերաբերյալ	Շինարարական տեղամաս	Փաստաթղթերի ստուգումներ: Շինարարական տեղամասերի ստուգայցեր Հանրային լտումներ Բողոքների գրանցամատյանի ստուգումներ	Բողոքներին/առաջարկությունները հասցեագրվել են բոլոր պահանջվող ընթացակարգերին համապատասխան	ՔԿ	Հանրային լտումները՝ շին աշխատանքները սկսելուց առաջ: Բողոքների մոնիտորինգ կանոնավոր ժամանակացույցին համապատասխան
3. Տարածքի մաքրում բուսականությունից	Տարածքի մաքրումը բուսականությունից համապատասխանում է ԲՄԾ-ին Շինհրապարակի	Շինարարական տեղամաս	Տարածքի բուսականությունից մաքրմանը վերաբերվող փաստաթղթերի ստուգում	Հատված թփերի գրանցամատյանը առկա է	ՔԿ	Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան

	մերձակայքի բուսականությունը պաշտպանված է		Շին. հրապարակի ստուգայցեր			
4. Շրջակա միջավայրի պահպանություն	Նստվածքների առաջացում Փոշու և այլ օդի աղտոտիչների արտանետումներ Աղմուկի և թրթռումների մակարդակի բարձրացում	Շին տեղամաս և շինհրապարակից 50 մ հեռավորության վրա գտնվող փողոց, աղմուկի, թրթռումների զգայուն ընկալիչներ	Ակնադիտական ստուգումներ շինհրապարակի ստուգայցերի միջոցով; Բողոքների գրանցամատյանի գրառումների ստուգում; Փոշու, աղմուկի, թրթռումների մակարդակների գործիքային ստուգում և վերլուծություն բողոքների առկայության դեպքում:	Գրանցամատյանում գրանցված բողոքների քանակն ու կարևորությունը; Փոշու, աղմուկի և թրթռումների մակարդակը գտնվում է ՀՀ գործող նորմերի սահմաններում;	ՔԿ ՎԽ	Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան
5. Շին աղբի և թափոնների տեղադրման վայրեր	Շին աղբի և թափոնների տեղադրման գտնվելու վայրը, հատակագիծը և կառավարումը:	Շին աղբի և թափոնների տեղադրման վայրի հարևանությամբ բնակչությանը պատճառված անհարմարություններ:	Փաստաթղթերի ստուգում; Շին աղբի և թափոնների տեղադրման վայրերի ստուգայցեր	Շին աղբի և թափոնների տեղադրման վայրը և հատակագիծը համապատասխանում են պետ մարմինների կողմից թույլատրվածին և Տարածքի կառավարման պլանին: Գրանցամատյանում գրանցված բողոքների քանակն ու կարևորությունը	ՔԿ ՎԽ	Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան
6. Երթևեկության և մոտեցման ուղիների կառավարումը	Երթուղիների և մոտեցման ուղիների գտնվելու վայրերը; ԲԿ-ի և հարևան բնակչությանը պատճառվող անհարմարությունները և անվտանգության հարցերը Ճանապարհների և այլ կառույցներին՝ հատկապես ջրահեռացման համակարգերին պատճառվող վնասներ:	Ճանապարհների օգտագործում, սարքավորումներ ի և Նյութերի տեղափոխության համար; Շինհրապարակի մոտեցման մուտքերը	Փաստաթղթերի ստուգում Շինհրապարակ կատարած ստուգայցեր	Երթևեկության և մոտեցման ուղիների համապատասխանությունը Պլանի մասնագրերին: Գրանցամատյանում գրանցված բողոքների քանակն ու կարևորությունը	ՔԿ ՎԽ	Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան

<p>7. Վտանգավոր նյութերի և թափոնների կառավարում</p>	<p>Վառելիքի, յուղերի և այլ թունավոր նյութերի պատահական կամ մշտապես տեղի ունեցող արտահոսքեր</p>	<p>Շինարարական տեղամաս</p>	<p>Փաստաթղթերի ստուգում Շինհրապարակ կատարած ստուգայցեր</p>	<p>Պատահարների դեպքում պատահարների հաշվետվության ձևի վարում: Պատահարները կառավարվում են Արտակարգ իրավիճակների պլանին համապատասխան:</p>	<p>ՔԿ ՎԽ</p>	<p>Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան</p>
<p>8. Թափոնների և շին. նյութերի կառավարում</p>	<p>Շինարարական թափոնների և նյութերի կառավարումը շինարարության ընթացքում</p>	<p>Շինարարական տեղամաս</p>	<p>Փաստաթղթերի ստուգում; Շինհրապարակ, հանքեր, թափոնավայրեր կատարած ստուգայցեր:</p>	<p>Շին աղբը, կենցաղային աղբը և ոչ պիտանի և ավելցուկային նյութերի քանակները կառավարվում են Պլանին և հրահանգներին համապատասխան և տեղադրվում են միայն թույլատրված վայրում: Թափոնների գրանցամատյանը մշակված է և պատշաճ վարվում է:</p>		
<p>9. Շինհրապարակի վերականգնում, կանաչապատում և տարածքի բարեկարգում</p>	<p>Շինհրապարակը մաքրված է, նույնը և թափոնները հեռացված են: Բոլոր մակերեսները, այդ թվում՝ ժամանակավոր օգտագործված տարածքները վերականգնված են: Շինհրապարակի տարածքը բարեկարգված է:</p>	<p>Շինարարական տեղամաս</p>	<p>Շինհրապարակի վերա-կանգնման, կանաչապատման և բուսականության վերականգնման պլանն առկա է: Բոլոր մակերեսները այդ թվում՝ ժամանակավոր օգտագործված տարածքները վերականգնված են մինչև սկզբնական վիճակը:</p>	<p>Ամբողջ շին աղբը, նյութերի մնացորդները և սարքավորումները հեռացված են շինհրապարակից: Թփերի վերատնկման վայրը և քանակը համապատասխանում են նախագծի կանաչապատման պլանին: Ապահովված է թփերի 90% կաշտականությունը:</p>	<p>ՔԿ ՎԽ</p>	
ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ (ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ) ՓՈՒԼ						
<p>11. Տարածքի բարեկարգում</p>	<p>Թփերի և այլ բուսականության նորմալ աճ</p>	<p>Կանաչապատման բոլոր տեղամասերը</p>	<p>Ստուգայցեր</p>	<p>Թփերի խոտածածկույթի սանիտարական վիճակի ստուգումներ</p>	<p>ՔԿ ԲԿ-ի տնօրինություն</p>	

Մասիսի բժշկական կենտրոնի կառուցում

Հավելված 14. Մասնակիցների ցանկ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԿԱԿՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌԱՐԱԿՈՒՄԻ ԿՈՄԻՏԵ
 Հասցե՝ Երևան, Կենտրոնի թաղամաս, Կոմիտասի պող. 110
 Կապակցման հեռ.՝ 52 22 22 22
 Կապակցման ֆակս՝ 52 22 22 22

ՄԱՍՆԱԿԻԿՆԵՐԻ ԾԱՆԿ

Գ.Գ.	Անուն, ազգանուն	Ծննդյան օր	Ծննդավայր	Կրթություն	Ստորագրություն
1	Կարգաթիվը փոփոխել	1980.01.15	Ստեփանավան	Տեխնիկական	[Ստորագրություն]
2	Կարգաթիվը փոփոխել	1980.01.15	Ստեփանավան	Տեխնիկական	[Ստորագրություն]
3	Կարգաթիվը փոփոխել	1980.01.15	Ստեփանավան	Տեխնիկական	[Ստորագրություն]
4	Կարգաթիվը փոփոխել	1980.01.15	Ստեփանավան	Տեխնիկական	[Ստորագրություն]
5	Կարգաթիվը փոփոխել	1980.01.15	Ստեփանավան	Տեխնիկական	[Ստորագրություն]
6	Կարգաթիվը փոփոխել	1980.01.15	Ստեփանավան	Տեխնիկական	[Ստորագրություն]
7	Կարգաթիվը փոփոխել	1980.01.15	Ստեփանավան	Տեխնիկական	[Ստորագրություն]
8	Կարգաթիվը փոփոխել	1980.01.15	Ստեփանավան	Տեխնիկական	[Ստորագրություն]
9	Կարգաթիվը փոփոխել	1980.01.15	Ստեփանավան	Տեխնիկական	[Ստորագրություն]
10	Կարգաթիվը փոփոխել	1980.01.15	Ստեփանավան	Տեխնիկական	[Ստորագրություն]
11	Կարգաթիվը փոփոխել	1980.01.15	Ստեփանավան	Տեխնիկական	[Ստորագրություն]
12	Կարգաթիվը փոփոխել	1980.01.15	Ստեփանավան	Տեխնիկական	[Ստորագրություն]
13	Կարգաթիվը փոփոխել	1980.01.15	Ստեփանավան	Տեխնիկական	[Ստորագրություն]
14	Կարգաթիվը փոփոխել	1980.01.15	Ստեփանավան	Տեխնիկական	[Ստորագրություն]
15	Կարգաթիվը փոփոխել	1980.01.15	Ստեփանավան	Տեխնիկական	[Ստորագրություն]
16	Կարգաթիվը փոփոխել	1980.01.15	Ստեփանավան	Տեխնիկական	[Ստորագրություն]
17	Կարգաթիվը փոփոխել	1980.01.15	Ստեփանավան	Տեխնիկական	[Ստորագրություն]
18	Կարգաթիվը փոփոխել	1980.01.15	Ստեփանավան	Տեխնիկական	[Ստորագրություն]
19	Կարգաթիվը փոփոխել	1980.01.15	Ստեփանավան	Տեխնիկական	[Ստորագրություն]
20	Կարգաթիվը փոփոխել	1980.01.15	Ստեփանավան	Տեխնիկական	[Ստորագրություն]

Գ.Գ.	Անուն, ազգանուն	Ծննդյան օր	Ծննդավայր	Կրթություն	Ստորագրություն
21	Կարգաթիվը փոփոխել	1980.01.15	Ստեփանավան	Տեխնիկական	[Ստորագրություն]
22	Կարգաթիվը փոփոխել	1980.01.15	Ստեփանավան	Տեխնիկական	[Ստորագրություն]
23	Կարգաթիվը փոփոխել	1980.01.15	Ստեփանավան	Տեխնիկական	[Ստորագրություն]
24	Կարգաթիվը փոփոխել	1980.01.15	Ստեփանավան	Տեխնիկական	[Ստորագրություն]
25	Կարգաթիվը փոփոխել	1980.01.15	Ստեփանավան	Տեխնիկական	[Ստորագրություն]
26	Կարգաթիվը փոփոխել	1980.01.15	Ստեփանավան	Տեխնիկական	[Ստորագրություն]
27	Կարգաթիվը փոփոխել	1980.01.15	Ստեփանավան	Տեխնիկական	[Ստորագրություն]
28	Կարգաթիվը փոփոխել	1980.01.15	Ստեփանավան	Տեխնիկական	[Ստորագրություն]
29	Կարգաթիվը փոփոխել	1980.01.15	Ստեփանավան	Տեխնիկական	[Ստորագրություն]
30	Կարգաթիվը փոփոխել	1980.01.15	Ստեփանավան	Տեխնիկական	[Ստորագրություն]
31	Կարգաթիվը փոփոխել	1980.01.15	Ստեփանավան	Տեխնիկական	[Ստորագրություն]
32	Կարգաթիվը փոփոխել	1980.01.15	Ստեփանավան	Տեխնիկական	[Ստորագրություն]
33	Կարգաթիվը փոփոխել	1980.01.15	Ստեփանավան	Տեխնիկական	[Ստորագրություն]
34	Կարգաթիվը փոփոխել	1980.01.15	Ստեփանավան	Տեխնիկական	[Ստորագրություն]